

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Շարունակութիւն ¹⁾)

2 ապրիլի.

Երէկ փոթորիկ էր: Հարաւային քամին քշում էր ամպերը՝ ձիերի ջուկի նման: Սկզբում հողմը ճեղքում ու ծւատում էր թուխպը, կիտում էր մի տեղ ու ցիրուցան էր անում երկնականարի տակ, յետոյ առաւ տակը և որքան ուժումը կար՝ խփեց ծովի երեսովը, որ բարկացած մարդու դէմքի նման մի ակնթարթում մթնոլեց ու սկսեց ի պատասխան փրփուր ցայտել դէպի վեր: Կատարեակ կռիւ երկու կատաղի ուժերի, որոնք փոխադարձաբար հարձակելով միմեանց՝ որոտ ու կայծակ են յառաջացնում: Բայց այդ բոլորը կարճ տևեց: Մենք այնուամենայնիւ չը դնացինք մեր սովորական զբօսանքը կատարելու, — ծովը շատ սաստիկ էր ակէկոծւում: Դրա փոխարէն մենք նայում էինք փոթորկին աշակիւսպատ պատշգամբից և երբեմն — երբեմն նայում էինք իրար: Ել չենք կարող

¹⁾ Տե՛ս «Մուրճ» 1892 թ. №Ն 1, 2, 3, 4:

ինքներս մեզ խաբել: Մեր մէջ ինչ որ ծագում է, ինչ որ սկսում է կատարւել: Մեզնից ոչ մէկը սովորական բարեկամական յարաբերութեան սահմանից դուրս եկող ոչ մի խօսք չի արտասանել, ոչ մէկս ոչինչ չենք խոստովանւել իրար և սակայն, երբ որ մենք խօսում ենք միմեանց հետ, զգում ենք, որ մեր խօսքերը միայն քողարկութիւն են մի ուրիշ բանի: Միևնոյնն է լինում, երբ որ գնում ենք ծովը զբօսնելու, երբ որ միասին կարդում ենք, երբ որ նա ածում է և ես լսում եմ: Մեր բոլոր այդ արարմունքները երևում են իբրև պատուակ, իբրև կեղծ արտաքին ձևեր, որոնց տակ դարանամուտ եղած թագնւում է բանի խորհրդաւոր էութիւնը, որ առ այժմ լուռ ու մունջ է և դէմքը ծածկած, բայց միշտ ներկայ է մեր արածներին և սուերի պէս հետևում է մեզ: Մեզնից ոչ մէկը դեռ չի ուզում նրա անունը տալ, բայց երկուսս էլ շարունակ զգում ենք նրա ներկայութիւնը: Այդ երևոյթը անշուշտ կրկնւում է ամեն անգամ, երբ տղամարդը և կինարմատը սկսում են փոխադարձաբար ներգործել միմեանց վրայ: Երբ է այդ սկսւել մեզ համար, ճիշտը չեմ կարող ասել, սակայն պէտք է խոստովանւմ, որ բոլորովին անակնկալ կերպով չի սկսւել:

Դեռսենց հիւրասիրութիւնը ընդունեցի, որովհետև տիկին Դեխը հօրս բարեկամունին էր և նրա մահից յետոյ ինձ այնքան կարեկցաբար էր վերաբերւում, որքան ոչ ոք Հռոմում: Սակայն ինքնագիտակցութիւնս այնքան զօրեղ է և ես այն աստիճան կարողանում եմ երկուսի բաժանւել, որ այստեղ գալուսպէս, չը նայելով որ սիրտս դեռ մորմոքւում էր վշտից, իսկոյն զգացի որ իմ ու այդ կնոջ յարաբերութիւնների մէջ ինչ որ փոփոխութիւններ են կատարւելու: Զայրանում էի ինքս ինձ վրայ, որ հօրս մահւան զրեթէ հետևեալ օրը մտքումս կարողանում է տեղ գտնել այդպիսի գիտակցութիւն, բայց այնուամենայնիւ այդ գիտակցութիւնը կար մէջս: Այժմ արդարանում են միայն իմ գուշակութիւններս: Իսկ եթէ ասացի, թէ մեր փոփոխւած յարաբերութեան դէմքը քողարկւած է, այդ նրա համար էր միայն, որ չը գիտեմ, թէ երբ կը կատարւի յեղաշրջումը և ինչ ձևով, բայց բովանդակութիւնը գուշակում եմ և այդ գուշակութիւնների թովիչ տպաւորութեան տակ եմ գրանւում: Շատ միամիտ պէտք է լինէի, եթէ ենթադրէի, թէ նա այդ

բանը այնքան լաւ չի զիտակցում որքան ես։ Նրեւի ինձնից աւելի լաւ զգալիս կը լինիւ Հաւանականօրէն նա է ղեկավարում այդ փոփոխութիւնները և ինչ որ լինում է՝ կատարում է նրա կամքովը և նրա սառը դատողութեան համաձայն։ Որսորդ Դիանան որոգայթ է լարում որսի համար։ Սակայն ինձ ի՞նչ, ի՞նչ եմ կորցնելու որ։ Ինչպէս զրեթէ իւրաքանչիւր տղամարդ՝ ես այն տեսակ վտանգաւոր երէններիցն եմ, որոնք թոյլ են տալիս իրանց հալածել միայն նրա համար, որ յարմար ըոպէին իրանք յարձակեն որսորդի վրայ։ Այդպիսի դէպքերում մենք բոլորս էլ բաւականաչափ եռանդ ենք ունենում։ Այդ այնպիսի մաքառումներ են, որոնց մէջ յաղթութիւնը իրերի բնութեան համաձայն մենք պէտք է տանենք։ Ես շատ լաւ գիտեմ, որ տիկին Դեւիսը ինձ չի սիրում, սակայն ես էլ նրան չեմ սիրում։ Մեր փոխադարձ ներգործութիւնը միմեանց վրայ ամենալաւ դէպքում երկու վերին աստիճանի արտիստական ու զգայական հեթանոս բնութիւնների ներգործութիւն է։ Նրա մէջ ինքնասիրութիւնն էլ է դեր խաղում, բացց այդ աւելի վատ է նրա համար, որովհետեւ այդպիսի խաղի ժամանակ կարելի է զուլը կորցնել և առաջ զնալով հասնել այնտեղ, ուր որ սէրը կը տանի։

Ես շատ հեռու չեմ գնալ։ Իմ զգացմունքներիս մէջ դէպի նա չը կայ ամենևին ոչ մտերմութիւն, ոչ քնքշութիւն, կայ միայն հիացումս chef-d'oeuvre-ից և տենչանք, որ բնականաբար զգում է տղամարդը, երբ որ այդ հրաշալի «զլուխ-գործոցը» կենդանի կին է։ Հայրս ասում էր, որ մեզ համար՝ հրեշտակին կնիկ զարձնելուց մեծ յաղթութիւն չը կայ, իսկ ես կարծում եմ, որ պակաս յաղթանակ չի լինիլ տղամարդու համար եթէ նա Ֆլորենտինեան Վեներայի տաք կռները փաթաթած զգայ իւր վզովը։

Այդ կողմից տիկին Դեւիսը վերջին խօսքն է այն բանի, որ կարող է փափաղել ամենանրբացած ու ամենաբուռն երեւակայութիւնը։ Իսկը Ֆրինա ¹⁾ է։ Կարելի է բոլորովին զժւել, երբ որ օրինակ

¹⁾ Յոն գեղեցկուհի, որ մի լանցանքի համար դատուելիս, փոխանակ պաշտպանողական ճառ ասելու, շորերը հանել էր դատարանի առաջ։ Փեղեցկապաշտ լոյններ տեսնելով՝ նրա ասուածալին գեղեցկութիւնը վճռել էին, որ նա չի կարող մեղաւոր լինել։

մարդ տեսնում է նրան ամառը տեսնակ հագած՝ այնպէս քիփ, որ մարմնի բոլոր զծագրութիւնները համարեա այնքան պարզ են երևում, որ- քան արձանի զծերը: Նաւակում Դանտէի բանաստեղծութիւնը կար- դալիս նա Սիրիլյայի ¹⁾ է նմանում և այդ ժամանակ մարդ հասկա- նում է Ներոնի սրբապիղծ կիրքը: Նա այնքան գեղեցիկ է, որ զրեթէ չարագուշակ է իւր գեղեցկութեամբ: Միայն նրա իրար խառնած սև յօնքերն են նրան ժամանակակից, արդի կին դարձնում, բայց ևս աւելի են կրակում մարդու: Նա սովորութիւն ունի մազերը ուղղե- լիս երկու ձեռքը ծործորակին դնել: այդ ժամանակ կռները բարձ- րանում են, ամբողջ իրանը ճկւում է դէպի յետ, կուրծքը առաջ է ընկնում և մարդ պէտք է կամքի մեծ ոյժ գործ դնի իւր վրայ, որ չը բռնի նրան, չը նստեցնի կռներին ու տանի հեռու, շատ հեռու մարդկանց աչքերից:

Մեզնից իւրաքանչիւրի մէջ կայ մի-մի թագնաւած Սատիր ²⁾, Ես որ հօ, ինչպէս ասացի, մի բացառիկ տպաւորւող մարդ եմ, և երբ որ մտածում եմ, թէ իմ ու Խնոնայի այդ կենդանի արձանի մէջ ինչ որ մի բան սկսում է կատարւել, թէ ինչ որ մի ոյժ անո- ղոք կերպով մղում է մեզ դէպի իրար, համարեա աչքերս շաղւում են և ինքս ինձ հարցնում եմ՝ դրանից էլ աւելի կատարեալ ինչ կարող է հանդիպել ինձ կեանքումս:

3 ապրիլի.

Որքան որ կին-մարդը կարող է կարեկցութիւն ու հոգատարութիւն ցոյց տալ ծանր կորուստ կրած բարեկամին՝ նա ինձ ցոյց է տալիս: Եւ սակայն զարմանալի բան է, նրա բարութիւնը ինձ վրայ լուսնեակի լոյսի տպաւորութիւն է գործում:— փայլում է, բայց տաքութիւն չ'ունի. արտայայտւում է ամենակատարեալ ձևերով, բայց հոգի չը կայ մէջը. բղիտում է վճռից և ոչ ընութիւնից: Իմ մէջ նորից սկիսւտիկն է խօսում, բայց ես երբէք այնպէս չեմ զմայլում, որ այդ զմայլմունքից մինչև անգամ դիտելու ընդունակութիւնս էլ

¹⁾ Հռոմում այդպէս էին անւանում մարդաբէ համարող կանաք:

²⁾ Առասպելական արարածներ՝ կէս-մարդ և կէս-նոխազ, Փոխարե- րաբար ասում են կնամուլ, ցինիկ մարդկանց մասին:

Մանօթ. Թարգմ.

կորցնեմ: Եթէ այդ աստուածունին բարի լինէր, ամենքի համար բարի կը լինէր: Մինչդեռ, օրինակ, նրա յարաբերութիւնը մարդուն հետ պարզ ցոյց է տալիս թէ ինչ սրտի տէր է նա: Ճիշտ է՝ խեղճ Դևիսի արիւնը այնքան սառել է, որ նա միտում է մինչև անգամ արևի տակ, երբ որ երկնքից կրակ է թափուում, բայց որքան ցուրտ է զգում նա իրան՝ կնոջ մօտ: Երբէք կնոջ կողմից կարեկցութեան նշոյլ անգամ չեմ տեսել դէպի նրա թշառ դրութիւնը: Կինը նրան պարզ ի պարզօց չի նկատում և բանի տեղ չի դնում: Այդ միլլիոնատէրը իրան շրջապատող շռայլութեան մէջ այնքան աղքատ է, որ մարդու խեղճն է դալիս: Նա կարծես անտարբեր է դարձել դէպի ամեն բան, բայց մարդա, քանի որ դեռ զիտակցութեան նշոյլ կայ մէջը, այնու ամենայնիւ զգում է ուրիշի բարութիւնը: Դրան ամենալաւ ապացոյց է այն, որ Դևիսը երախտագիտութեամբ է վերաբերւում ինձ միմիայն նրա համար, որ ես երբեմն-երբեմն խօսում եմ հետը նրա առողջութեան մասին:

Գուցէ և նրան ղեկավարում է այն անզիտակցական ձգտումը, որի շնորհիւ թոյլ ու անօգնական արարածները փարում են աւելի ուժեղներին: Իսկ ես երբ որ տեսնում եմ նրա կաւճաղօն դէմքը՝ իմ բռունցքքիս մեծութեամբ, նրա երկու չփի նման ոտները, նրա՝ մինչև անգամ շօք եղանակին հաստ պլեդով փաթաթած պուճուր մարմինը, անկեղծ սրտով խղճում եմ նրան: Սակայն չեմ ուզում մինչև անգամ իմ առջև աւելի լաւ ձևանալ քան եմ իսկապէս: Այդ կարեկցութիւնը ինձ ոչնչից չի պահել: Դառը ստեղծւած է զայլին զոհ գնալու համար: Ինձ յաճախ զարմանք է պատճառել այն, որ երբ կին է լինում մէջտեղը՝ տղամարդիկ անզուժ են դառնում միմեանց վերաբերմամբ. այդ մեղնում զազանային բնագոյմունքի մնացորդն է, որ հրամայում է կեանքի ու մահւան կռիւ մղել էգի համար: Այդ կռուում, թէև նա մարդկանց մէջ ուրիշ կերպարանք է ստացել, վայ թոյլերին: Մինչև անգամ պատուի զգացմունքը այդ ժամանակ մարդուս չի սանձում: միմիայն կրօնն է, որ անպայման կերպով դատապարտում է այդ կռիւը:

12 ապրիլի.

Տասը օր կը լինի, որ ոչինչ չեմ գրել: Մեր յարաբերութիւնների յեղաշրջումը կատարւեց սրանից մի շաբաթ առաջ: Առաջուց

ենթադրում էի, որ այդ ծովի վրայ էր լինելու Այն տեսակ կանաչը, ինչպես Լաուրան է, մինչև անգամ ինքնամոռացութեան բուսականին չեն մոռանում համապատասխան պայմաններ ընտրելու մասին: Եթէ նրանք մինչև անգամ բարի գործեր միայն նրա համար են անում, որ այդ սազում է նրանց, ևս աւելի հարկաւոր է նրանց համար, որ իրանց անկումը գեղեցիկ լինի: Դրա վրայ աւելանում է և այն սէրը դէպի արտասովոր բաները, որ բղխում է ոչ թէ նրանց հոգու մէջ եղող պօէզիայից, այլ՝ զարդ դառնալու յարմար ամեն բանով զարդարելու ցանկութիւնից: Այն աստիճան չեմ կորցրել զլուսս, որ կարծիքս փոխեմ Լաուրայի մասին, թէպէտև իսկն ասած չը գիտեմ, արդեօք իրաւունք չունի նա լինելու այնպէս ինչպէս է և կարծելու, թէ մինչև անգամ արեգակն ու աստղերը գոյութիւն ունեն միայն նրա համար, որ ինքը կարողանայ նրանցով զարդարել: Անպայման գեղեցկութիւնը, իրերի բնութեան համաձայն, պէտք է լինի անսահման եսականութիւն, որ ամեն բան սոսորդարարում է իրան: Լաուրան այդպիսի գեղեցկութեան մարմնացումն է և ոչ ոք իրաւունք չունի նրանից պահանջել աւելի քան այն, որ նա միշտ և ամեն տեղ գեղեցիկ լինի. զոնէ ես դրանից աւելի ոչինչ չեմ պահանջում...

Օրհնեալ լինի իմ նաւավարական հմտութիւնս, որի շնորհիւ ծովի վրայ նաւակով զբօսնելիս ես ու Լաուրան կարողանում ենք մենակ մնալ: Սրանից մի շարաթ առաջ ամենասաստիկ շղբի ժամանակ Լաուրան ինձ ասաց, որ ուզում է ծովում զբօսնել: Նա Հեկատայի նման սիրահարած է արևի տապի վրայ: Մեզմէն կարճ միջոցում բաւական հեռու մղեց մեզ ամիսից և յանկարծ հանդարտեց: Մեր լատինական առաջատուր վայր իջաւ կայմի վրայով: Արեգակի ճառագայթները անդրադառնալով հայելիի պէս ողորկ ջրի երեսից աւելի սաստկացնում էին շղբը, թէև կէսօրից անց էր: Լաուրան ընկաւ մակույկի յատակին փռած հնդկական խալիի վրայ, և, գլուխը դնելով բարձին, մնաց անշարժ, թաթախւած նաւակի ամպնովանի միջով թափանցող ճառագայթների յունիսեան լոյսի մէջ: Ինձ տիրեց մի տարօրինակ հեշտասիրութիւն և միւլնոյն ժամանակ հիացման սարսուռ էր անցնում մարմնովս այդ կնոջը նայելիս, որք յունական մարմնաձևերը զծագրւում էին թեթեւ հագուստի տակ: Նրա

վրայ էլ մի տեսակ թմրութիւն էր իջել. աւքերը շաղւած էին, բերանը՝ կիսաբաց, ամբողջ մարմինը՝ թռչլու մեղկացած: Երբ որ աւքս քցում էի նրա վրայ, նա փակում էր կոպերը, կարծես ուզում էր ասել ինձ՝ «Տես, որքան թռչլու եմ...»:

Շատ ուշ վերադարձանք տուն և այդ մեր վերադարձը երկար ժամանակ կը մնայ չիշողութեանս մէջ: Արեւի մայր մոնելուց յետոյ, որի ժամանակ երկինքն ու ծովը միախառնւելով մի փայլուն ամբողջութիւն էին կազմել՝ անսահման ու անբաժան, այնպիսի հրաշալի գիշեր սկսեց, որի նմանը երբէք չեմ տեսել Ռիւիէրայում: Հորիզոնի տակից բարձրացաւ լուսնի ահագին կարմրագոյն շրջանակը, փարատեց խաւարը մեղմ լոյսով ու շողքը զցեց ծովի վրայ: Մենք նաւում էինք դէպի ափը այդ շողքի կազմած լայն շողշողուն ճանապարհով: Ծովը մեղմ ծփում էր սովորական գիշերային ծփանքով, որ նմանում է խորը հոգոցներին: Փոքրիկ նաւահանգստից մեր ափանջին էին հասնում Վիգուրացի ձկնորսների խմբովին երգի ձայները: Քամին նորից բարձրացաւ, բայց ափին էր զալիս և բերում էր ծաղկած նարնջենիների բուրմունքը: Զընայելով որ ես չեմ կարողանում լիովին անձնատուր լինել ոչ մի տպաւորութեան, այնուամենայնիւ ինձ բոլորովին թովել էր այդ չնաշխարհիկ քաղցրութիւնը, որ սփռւած էր ծովի ու ցամաքի վրայ և ցօղի նման նստում էր աւարկանների ու հոգիների վրայ: Երբեմն-երբեմն նայում էի այն՝ Հեղինէի նման գեղեցիկ կնոջ վրայ, որ առաջիս լուսնի լոյսով սպիտակին էր տալիս և մոտախաբութեան մէջ էի ընկնում,— ինձ թւում էր թէ մենք ապրում ենք հին յոյների դարում, թէ նաւում ենք դէպի նւիրական ձիթենիների անտառը, ուր կատարւում են Ելեզինեան խորհրդատուները: Մեր վերացումը մեզ թւում էր ոչ միայն բուռն զգացական մի բան, այլ և մի տեսակ պաշտամունք, մի տեսակ միադիական կապ այդ գիշերուան, այդ դարնան, ամբողջ բնութեան հետ:

15 ապրիլի.

Մեր այւտեղից գնալու ժամանակն եկել է, բայց չենք գնում: Իմ Հեկատան արեւից չի վախճնում: Դեխին արեւը բուժում է, իսկ ինձ համար Զւիցերիայումն էլ այնպէս կը լինի ինչպէս այստեղ է:

Տարօրինակ միտք է ծագում գլխումս, ես աշխատում եմ հեռացնել նրան գլխիցս, բայց պարզ կասեմ թէ ինչ միտք է, — երբեմն-երբեմն ինձ թւում է որ քրիստոնեայի հոգին, թէպէտե հաւատի աղբիւրը նրանում բոլորովին ցամաքած լինի, չի կարող ապրել միմիայն արտաքին գեղեցկութեամբ։ Այդ ինձ համար շատ ցաւալի գիւտ է, որովհետեւ եթէ իմ ենթադրութիւնս ճիշտ դուրս գայ, ոտներին տակից կ'անհետանայ այն հողը, որի վրայ կանգնած եմ այժմ։ Սակայն այդ միտքը ինձ հանգիստ չի տալիս։ Մենք ուրիշ կուլտուրայի պատկանող մարդիկ ենք։ Մեր հոգիներում կան շատ զոթական սլաքանման ձեւեր ու մանաժապոտյոյ դժեր, որոնցից մենք երբէք չենք ազատուիլ և որոնք չը կային յունական հոգիներում։ Մեր հոգիները բնազդաբար բարձրանում են դէպի վեր, նրանցը՝ մեղմութեամբ ու պարզութեամբ փռւում էին գետնի երեսով։ Ճիշտ է՝ մեզնից նրանք, որոնց մէջ Հելլադայի ոգին աւելի սաստիկ է բաբախում քան ուրիշների մէջ, կեանքից գեղեցկութիւն են պահանջում և ազահաբար փնտռում են գեղեցկութիւն, բայց նրանք էլ անգիտակցաբար ուզում են, որ Ասպադիան Դանտէի Բէատորիչէի աչքերն ունենայ։ Այդպիսի ցանկութիւններ իմ մէջ էլ կան։ Երբ որ ինձ ու ինձ մտածում եմ, որ այդ սքանչելի մարդանասունը՝ Լաուրան՝ պատկանում է ինձ և կը պատկանի քանի որ սիրտս ուզի, սաստիկ և կրկնակի ուրախութիւն եմ զգում — տղամարդու և գեղեցկի երկրպագուի ուրախութիւն. և սակայն ինչ որ մի բան պակաս է ինձ ու չեմ կարողանում լիակուրծք շունչ քաշել։ Իմ յունական մեհանի սեղանի վրայ կանգնած է մարմարէ աստուածուհի, բայց զոթական տաճարս դատարկ է։ Հասկանում եմ որ ինձ հանդիպել է գրեթէ կատարելութեան մօտեցող մի բան, սակայն չեմ կարողանում ազատուիլ այն մտքից, որ այդ կատարելութիւնը սուեր է ձգում յետեից։ Սա առաջ կարծում էի, թէ Գէօթէի խօսքերը, — շնամանեցէք աստուածներին ու անասուններին՝ ամբողջապէս բովանդակում են կեանքը և կենսական իմաստութեան վերջին խօսքն են. իսկ այժմ երբոր կատարում եմ այդ պատուիրանը, զգում եմ որ այդ նախադասութեան մէջ պակաս է ճերշտակներին խօսքը։

17 ապրիլի.

Ղեկիսն այսօր տեսաւ ինձ նստած ցածիկ աթոռի վրայ Լաու-
րայի ոտների մօտ ու զլուխս դրած նրա ծնկներին: Նրա անարիւն
դէմքից ու հանգած աչքերից մի վայրկեան անգամ չը հեռացաւ
անտարբեր ու ծնշած արտայայտութիւնը: Հնդկական արևանկարնե-
րով ասղնագործւած փափուկ հողաթափները հադին նա անմարմին
էակի նման հանդարտ անցկացաւ ու մտաւ կողքի զրադարանը:
Լաուրան սքանչելի էր, երբ որ նրա աչքերը փայլատակեցին ան-
զուպ զայրոյթից: Սա վերկացաւ ու սպասում էի, տեսնեմ թէ ինչ
կը լինի: Մոքովս անցաւ թէ զուցէ Ղեկսը զրադարանից դուրս
կը գալ ռետուէրը ձեռքին: Միտքս դրել էի այդ դէպքում պատուհա-
նովը դուրս շարտել նրան իւր պլեդով, ռետուէրով ու հնդկական հո-
ղաթափներովը միասին: Բայց նա դուրս չ'իկաւ: Շատ սպասեցի ու
զուր տեղը: Չը գիտեմ ինչ էր անում այնտեղ. իւր թշուառ զրու-
թեան վրայ էր մտածում արդեօք, թէ լաց էր լինում, թէ զուցէ
մնացել էր բոլորովին անտարբեր: Մենք երեքով իրար հետ տեսնուե-
ցինք միայն նախաճաշին և այնպէս նստեցինք նախաճաշելու կարծես
սկի ոչինչ չէր պատահել: Գուցէ երեւակալութիւնիցս էր, բայց ինձ
թուում էր, թէ Լաուրան նրա վրայ խիստ հայեացքներ է գցում,
իսկ նրա անտարբերութեան մէջ սովորականից աւելի դառնութիւն
կայ: Պէտք է ասել, որ զործը ինձ համար դրանից աւելի անսխորժ
կերպով չէր կարող վերջանալ: Նրա դէմքը այդ արտայայտութեամբ
ամբողջ օրը աչքիցս չէր հեռանում և հէնց այժմ էլ առաջիս կանգ-
նած է իբրև անխօս յանդիմանութիւն: Առասէր չեմ, բայց պատ-
րաստ եմ արածիս պատասխանը տալու. վերջապէս ես ազնւական եմ
և աւելի լաւ կը համարէի, որ Ղեկսը այդպէս պտտիկ, հիւանդոտ,
անպաշտպան մարդ չը լինէր, մի խօսքով այնպէս թրջած հաւ
չը լինէր: Այնպիսի դարշելի բան եմ զգում, կարծես անդամալուծ
մարդու ապտակ եմ տւել. շատ քիչ է պատահել, որ ինքս դէպի ինձ
այսպէս զզանք զգացած լինեմ:

Սակայն ըստ սովորականին գնացինք ծովը զրօսնելու, որովհե-
տեւ չէի ուզում որ Լաուրան կարծէր թէ չեմ համարձակւում զնալ
Ղեկիսի վախից. բայց այնտեղ առաջին անգամը մեր մէջ թիւրիմա-
ցութիւն ծագեց: Խոստովանեցի նրան, որ խղճահարւում եմ, իսկ

երբ որ նա սկսեց խղճահարւելուս վրայ ծիծաղել, ուղղակի ասացի նրան.

—Այդ ծիծաղը քեզ սազ չի գալիս, իսկ դու պէտք է չը մոռանաս, որ ամեն բան կարող ես անել, բացի այն բաներից, որոնք քեզ չեն սաղում:

Նոյ կիսեց իրար խառնւած յօնքերն ու դառը—դառը ասաց:

—Մեր մէջ տեղի ունեցած բանից յետոյ դու ինձ աւելի անպատիժ կերպով կարող ես վիրաւորել քան Գեւորհի:

Այդպիսի յանդիմանութիւնից յետոյ ինձ ոչինչ չէր մնում անել քան ներողութիւն խնդրել նրանից, այնպէս որ շուտով մեր մէջ հաշտութիւն տիրեց և Լաուրան սկսեց խօսել իւր մասին: Նա մի անգամ էլ ապացուցեց որ շատ խելացի կին է: Առհասարակ, որքան կանանց հետ որ ծանօթ եմ եղել, բոլորն էլ որոշեալ պայմաններում անդիմադրելի ցանկութիւն են ցոյց տւել իրանց կեանքի պատմութիւնն անելու: Ի՞նչ կարծիքով այդ վատ բան չէ, որովհետեւ այն է միայն ապացուցանում, որ նրանք պահանջ են զգում իրանց արդարացնելու՝ թէ իրանց և թէ մեր աշքում, պահանջ, որ մենք ամենեւին չենք զգում: Բայց և երբէք ինձ չի հանդիպել ոչ այնքան խելօք կին, որ իւր խոստովանութեան մէջ պահպանէր համապատասխան արտիստական չափը, ոչ էլ այնքան ճշմարտախօս, որ թոյլ չը տար իրան սուտ ասել ինքն իրան աւելի լաւ արդարացնելու համար: Ասածիս վկայ եմ բերում բոլոր տղամարդկանց, որոնք դէպք եղած ժամանակը բացի այդ կարող են հաստատել և այն, որ այդ անկուսմների պատմութիւնները միշտ սաստիկ նման են լինում մէկ-մէկի, ուստի և չափից դուրս ձանձրալի են լինում Լաուրան սկսեց խօսել իւր մասին նոյնպէս մի քիչ անզուսպ զարճութեամբ, բայց դրանով սահմանափակեց նրա նմանութիւնը ուրիշ ստորացած հրեշտակների հետ: Պատմելիս գուցէ նա մի քիչ աշխատում էր բնութոյն ձևանալ, բայց ոչ ամենեւին գործ: Իմանալով, որ լսողը սկսւում է, նա չէր ուզում հնթարկւել թերահաւատութեան ներողամիտ ծիծաղը տեսնելու վտանգին: Նրա անկեղծութիւնը քիչ էր մնում հասնէր յանդիմանութեան և կը հասնէր գրեթէ ցինիկականութեան, եթէ մի տեսակ կենսական սխտեմ չը լինէր, որի մէջ էսթետիկան ամբողջապէս փոխարինել է բարոյագիտութիւնը: Նա ուզեցել է, որ իւր

կեանքը ունենայ Ապոլլոնի զեղեցկութիւնը և ոչ պոլիշինէլի կուզը, — ահա նրա փիլիսոփայութիւնը: Գեիսի հետ պատկեւ է ոչ թէ ուղղակի նրա փիլիսոնների համար, այլ որպէս զի այդ փիլիսոնների շնորհիւ որքան որ հնարաւոր է մարդուս դուրեկան կեանք ստեղծի իւր համար և այն այդ բառի ոչ գռեհկական, այլ ամենաբարձր, արտիստական նշանակութեամբ: Ասենք ոչ մի պարտականութիւն չի զգում դէպի մարդը, որովհետեւ սկզբից նրան ամեն բան ասել է. համ խղճում է նրան, համ էլ զգանք է զգում դէպի նա և քանի որ նա միանգամայն անտարբեր է դէպի ամեն բան, նրան այնքան է բանի տեղ դնում որքան որ կը դնէր եթէ արդէն մեռած լինէր: Բացի այդ նա աւելցրեց, որ առհասարակ հաշի չի առնում ոչ մի բան, որ հակառակ է զեղեցկութեան և կեանքի քաղցրութեան: Հասարակութեան վերաբերմունքը նրա համար շատ քիչ նշանակութիւն ունի և սխալ կը լինէր իմ կողմից եթէ հակառակը կարծէի: Հօրս բարեկամաբար էր վերաբերում ոչ թէ նրա հասարակական զիրքի համար, այլ այն պատճառով, որ նրան համարում էր բնութեան գլուխ-գործոց: Ինձ վաղուց է սիրելիս եղել: Գիտէ, որ ես իրան աւելի կը գնահատէի եթէ որ աւելի դժւարութեամբ ձեռք բերէի, բայց չի ուղեցել սակարկութիւն անել իւր սեփական երջանկութեան հետ:

Տարօրինակ տպաւորութիւն էի գործում ինձ վրայ այդ հրաշալի բերանից լսող, մեղմ, քաղցր, մետալական հնչիւններով լի ձայնով արտասանող սկզբունքները: Խօսելիս նա շորերը հաւաքեց իւր ոտների մօտ, կարծես կողքին ինձ տեղ բաց անելու համար: Երբեմն նա աչքերով հետևում էր մեր մօտով թռչող ձկնկուջներին, յետոյ նորից դարձնում էր աչքերը՝ իմ դէմքիս էր նայում հետաքրքրւելով թէ ինչ է արտայայտում նա: Ես զւարճութեամբ էի լսում նրա խօսքերը, որովհետեւ նրանք ապացուցանում էին, որ ես այդ կնոջը հասկացել եմ: Ոսկայն նրա խօսքերի մէջ այնպիսի բան էլ կար, որ ինձ համար բոլորովին նոր էր: Չը նայելով որ ես շատ բարձր էի դասում նրա խելքը, բայց էլի կարծում էի թէ նրա վարմունքը աւելի բնազդական է, թէ նրա արածները մեծ մասամբ բղխում են նրա բնութիւնից. ես չէի կենթադրում, որ նա ընդունակ է ամբողջ մի սիստէմ հնարել իւր բնութեան միտումները արդարացնելու ու նրանց նեցուկ տալու համար:

կրող չափով այդ բարձրացրեց նրան իմ աչքում, որովհետև զուրս եկաւ, որ այնտեղ, ուր ես կասկած էի տանում զանազան ստոր հաշիւներէ մասին, նա վարելիս է եղել իւր սկզբունքի համաձայն, գուցէ և վատ ու մինչև անգամ սարսափելի սկզբունքի, բայց այնուամենայնիւ սկզբունքի: Ինձ թւում էր, օրինակ, թէ նա զաղտնի դիտաւորութիւն ունի ինձ հետ պսակելու Ղևիսի մահից յետոյ. այժմ նա ապացուցեց ինձ որ ես սխալւած եմ եղել: Նա ինքը սկսեց այդ բանի մասին խօսել: Խոստովանեց, որ եթէ ես պսակելու առաջարկութիւն անէի նրան, երեւի նրա ուժիցը վեր կը լինէր մերժել, որովհետև նա ինձ աւելի սաստիկ է սիրում քան ես կարծում եմ (այդ ժամանակ նրա դէմքն ու վիզը կարմրեցին ու վառւեցին): սակայն գիտէ, որ այդ երբէք չի լինել, հաւատացած է, որ վաղ թէ ուշ հեշտ ու հանգիստ կը թողնեմ նրան, կը հեռանամ, բայց ինչ անենք որ: Այժմ կոխում է ջրի մէջ և քաղցր զովութիւն է զգում. միթէ նա պէտք է իրան զրկի այդ զարմութիւնից այն պատճառով, որ գիտէ թէ մի բոպէ անցած արեւը կը ցամաքեցնի նրա ձեռքի վրայի սառը ջուրը:

Այդ ասելիս նա կռացաւ նաւակի վրայով, այնպէս որ նրա իրանը զծագրւեց իւր անաղարտ կատարելութեամբ, և ջրի մէջ թաթախած թաց, վարդիգոյն ստացած, արևի ճարագայթներէից թափանցիկ ձեռները մեկնեց դէպի ինձ:

Ես բռնեցի նրա թաց ձեռները, իսկ նա, կարծես ներդաշնակւելով իմ տպաւորութիւններին, արտասանեց քաղցր, սիրալիր ձայնով.

— Մօտ արի...

20 ապրիլի.

Երէկ ամբողջ օրը Լաուրային չեմ տեսել, որովհետև տկար էր: Պատշգամբում գիշերը երկար նստել էր, մրսել է, իսկ յետոյ՝ մրսածութիւնը փոփոխւել է ատամնացաւի: Սիրտս սաստիկ նեղանում է: Բարեբախտաբար դեռ մէկէլ օրը Ղևիսի համար բժիշկ կանչեցին, որ շարունակ նրա մօտ է մնում, ապա թէ ոչ մարդ չէր լինի որ հետը մի խօսք խօսէի: Բժիշկը ահագին գլխով ու արագաշարժ աչքերով, սևուկ, պստիկ, ածուխի կտորի նման մի ջահէլ իտալացի է: Նստ խելացի մարդ է երևում: Պարզ է որ հէնց առաջին երեկոյից

զննել է մեր դրութիւնը և մեր մէջ տիրող յարաբերութիւնները, տեսածը բերորովին բնական բան է համարել և առանց տատանելու ընդունել է ինձ տան իսկական տէր: Այսօր առաւօտ չը կարողացաւ պահել ծիծաղս, երբ որ նա ինձնից հարցրեց, թէ արդեօք կարող է տեսնել ռոյկին կոմսուհուն և զեղ գրել նրա համար: Շատ տարօրինակ են այստեղի սովորութիւնները: Ուրիշ երկիրներում ամեն տեղ, երբ որ մարդատէր կնոջ վրայ կասկած է ընկնում, թէ ուրիշի է պատկանում, ամբողջ հասարակութիւնը միացած սկսում է հալածել նրան յաճախ անմիտ անգթութեամբ: Այստեղ ընդհակառակը սէրը այնպիսի ջարդ է վայելում, որ ամենքը իսկոյն նրա կողմն են անցնում և սկսում են դաւադրութիւն կազմել ի նպաստ սիրահարւածների: Խաւաքուն պատասխանեցի, թէ կը հարցնեմ տիկին կոմսուհուց, կ'ուզի արդեօք տեսնել նրա հետ: Այդպիսով այսօր նախաճաշից յետոյ ներս պրծայ Լաուրայի բողոքարար: Նա ինձ դժկամակութեամբ ընդունեց, որովհետեւ երեսը մի քիչ ուռել է և չէր ուզում որ ես նրան այդ դրութեամբ տեսնէի: Եւ իրաւ նրան որ տեսայ՝ մտաբերեցի իմ վաղուցւան նկարչութեան դասերս: Այն ժամանակ նկատել էի, որ նոր ժամանակաց դէմքեր նկարելիս կարելի է զանազան անճշտութիւններ անել, մինչև անգամ այս ու այն բանը փոխել, բայց եթէ դէմքի արտայայտութիւնը, դէմքի զաղափարը մնացած լինի, այդ անճշտութիւններն ու փոփոխութիւնները նմանութեանը ամենեւին չեն մնասիլ: Բոլորովին ուրիշ բան է հնադարեան (անտիք) դէմքեր նկատելիս, ամենաչին անճիշտ գիծը, ամենաչին ծռութիւնը ոչնչացնում է դէմքի ներդաշնակութիւնը ու ուրիշ դէմք է դարձնում նրան: Այժմ մի նոր ապացոյց դուայ իմ առաջւան նկատածիս՝ Լաուրայի օրինակում: Նրա դէմքի ուռուցքը շատ աննշան էր, ճիշտն ասած ես համարեա չը տեսայ էլ այդ ուռուցքը, որովհետեւ նա յամառութեամբ դարձնում էր իմ կողմը իւր առողջ կիսադէմը, բայց որ աչքերը քիչ ու միշ կարմրած էին ու կռպերը սովորականից մի քիչ աւելի ծանրացել էին, էլ այն՝ իւր ներդաշնակութեամբը կատարեալ դէմքը չէր և շատ տղեղ էր իւր ամենօրեայ զեղեցկութեան համեմատութեամբ: Ի հարկէ այնպէս արեցի որ Լաուրան այդ չը հասկանայ, բայց նա իմ հաճոյախօսութիւնները մի քիչ անհանգստու-

Թեամբ էր լսում, կարծես թէ խիղճը տանջում էր նրան։ Անշուշտ նրա սկզբունքով Ֆլիւսը մահացու մեղք է։

Ցարօրինակ սկզբունքներ են, ես իմ Աստածը, իմ հոգիս էլ անկասկած հինաւուրց յոյնի հոգի է, բայց իմ մէջ բացի հեթանոսից մի ուրիշ բան էլ կայ։ Լաուրան մի ժամանակ կարող է շատ անբախտ լինել իւր փիլիսոփայութեան շնորհիւ։ Ես դեռ հասկանում եմ, որ մարդ կարող է իւր համար կրօն դարձնել գեղեցկութիւնը ընդհանրապէս, բայց ով որ իւր սեփական գեղեցկութիւնն է կրօն դարձնում, իւր համար դժբախտութիւն է պատրաստում։ Ինչ կրօն է այն կրօնը, որ կարող է խախտուել մի հասարակ Ֆլիւսից և կարող է հիմնայատակ լինել քթի վրայ դուրս եկած պզուկից։

25 ապրիլի.

Սակայն պէտք է գնալ Զւիցերիա, որովհետեւ շրջերը անտանելի են դառնում։ Բացի այդ, ժամանակ առժամանակ Աֆրիկայից տեղափոխւոյն արտաշնչութեան նման փչում է Սիրիոյն։ Ճիշտ է՝ ծովը ջովացնում է անսպասի այդ շունչը, բայց էլի անտանելի է։

Սիրիոյն Դևիսին սարսափելի ֆլետսում է։ Բժիշկը հակում է այժմ, որ նա մորֆիահարբութեան չը տայ իրան, ուստի նա երբեմն վերին աստիճանի զրգուած է լինում, երբեմն էլ կատարեալ թմրութիւն է դալիս վրան։ Բայց նկատել եմ, որ ամենակատաղած բոլորներին անգամ նա վախենում է Լաուրայից ու ինձնից։ Ով գիտի, արդեօք այդ կիսախելագարի ուղեղում չի սկսում ծագել հալածանքի մանիա և արդեօք նա արդէն չի տանջւում կասկածելով թէ մենք ուզում ենք նրան սպանել կամ խեղդել։ Առհասարակ իմ յարաբերութիւնը դէպի նա ինձ համար իմ դերիս ամենասուղի կողմերից մէկն է։ Ասում եմ՝ մէկը, որովհետեւ շատ լաւ հասկանում եմ, որ շատ ուրիշ այդպիսի կողմեր էլ կան։ Ես Պլոշովսկին չէի լինիլ եթէ չը նկատէի, որ այսպէս թէ այնպէս հոգիս ոչ միայն մեղկանում է, այլ և արագ ու փճական կերպով փչանում է այդ կնոջ գրկում։ Մինչև անգամ ասել չեմ կարող թէ որքան զգանք, դառնութիւն ու խղճահարութիւն է պատճառել սկզբից ի վեր ինձ այն միտքը, որ ես այդպէս անմիջապէս, այդպէս իսկոյն հօրս մահից յետոյ խորասուզեցի հաճոյքների ու զգայական կրքերի այդ

յորձանքի մէջ: Այդ վրդովեցնում է թէ իմ խիղճս և թէ նրբազգացութիւնս, որ անկասկած ունեմ: Այնքան անտանելի էր ինձ համար, որ չէի կարողանում դրա մասին գրել: Այժմ անտարբեր եմ դարձել: Երբեմն-երբեմն ինքս ինձ յանդիմանութիւն եմ անում, մտածում եմ այդ յանդիմանութիւնների մասին, բայց խկապէս խիղճս ոչինչ չի զգում:

Անեկլայիս աշխատում եմ մոռանալ, որովհետև նրան չիշելիս սաստիկ տանջւում եմ կամ, աւելի ճիշտն ասած, չեմ կարողանում ինքս ինձ հետ հաշուել, երբ որ մտաբերում եմ կեանքիս այդ Պոչովում տեղի ունեցած միջնադէպը: Երբեմն ինձ թւում է թէ ես արժանի չեմ նրան, իսկ երբեմն թէ էշ էի դարձել ու պարզ ի պարզոց ծիծաղելի դեր էի կատարում այդ օրիորդի մօտ, որ ոչինչով չի տարբերւում հարիւրաւոր ուրիշ օրիորդներից: Այդ իմ ինքնասիրութեանս դիպչում է, ուստի և ռիսի նման մի բան եմ զգում դէպի Անեկլան: Այնպէս է լինում, որ մի ժամ Անեկլայի վերաբերմամբ մեղաւոր լինելու գիտակցութիւնը ինձ տհաճութիւն է պատճառում, իսկ մի ուրիշ ժամ արած յանցանքս ինձ չիմար ու երեխայական բան է թւում: Առհասարակ ես, այնպէս ինչպէս որ էի Պոչովում, ինքս ինձ դուր չեմ գալիս, բայց և այնպէս ինչպէս այժմ եմ նոյնպէս դուր չեմ գալիս ինձ: Իմ մէջ որոշեալ չափով անհետանում է բարիի ու չարի մէջ եղած տարբերութեան զգացումը, և, որ աւելի է, ես սկսում եմ անտարբեր վերաբերւել այդ զանազանութեանը: Այդ յառաջանում է ոգուս մի տեսակ մեղկութիւնից, սակայն միւս կողմից այդ մեղկութիւնը փրկում է ինձ, որովհետև երբ որ ներքին ալէկոծութիւնը տանջում է ինձ, նա ասում է՝ «Դիցուք թէ այժմ աւելի վատ ես քան առաջ. լաւ, ինչ անենք որ: Ինչու պէտք է ինքդ քեզ տանջես այս կամ այն պատճառով:»

Յետոյ իմ մէջ մի ուրիշ փոփոխութիւն էլ եմ տեսնում: Հետզհետէ սովորել եմ մինչև անգամ այն բանին, որ սկզբում սաստիկ դիպչում էր իմ պատուասիրութեանս—և այժմ աւել կամ պակաս անտարբերութեամբ ապտակում եմ անդամալուծին: Մի քանի օրից ի վեր նկատում եմ, որ ինքս ինձ հազար ու մի բան եմ թոյլ տալիս, որ երբեք չէք համարձակիլ անել եթէ որ Դևիտը այդպէս Ֆիզիկա, ւէս ու մտաւորապէս ողորմելի արարած չը լինէր, այլ կտրիճ,

իւր պատիւն ու սեփականութիւնը պաշտպանելու ընդունակ մարդ լինէր: Արդէն այլ ևս նեղութիւն չենք տալիս մեզ ծովը զնալու... Ձէի ենթադրում ամենեւին որ իմ զգայնութիւնը այդ կողմիցն էլ կարող է այդքան բթանալ: Ճիշտ է ես հեշտ ու հանգիստ կարող եմ ինքս ինձ ասել՝ ինձ ինչ այդ քոնձուտ արեւելցին, բայց Ասուած վկայ, միւսնոյն ժամանակը շատ անգամ չեմ կարողանում ազատել այն մտքից, որ Իւնոնայի յօնքերով սեւահեր ասուածուհիս իսկապէս ոչ թէ Իւնոնա պէտք է անւանւի, այդ Յիրցէա ¹⁾ և որ նրա հաւաւորութիւնը մարդկանց դարձնում է... — ինչպէս ասենք որ, որքան կարելի, դիցաբանօրէն դուրս գալ... Նւմէյի ²⁾ սանիկ:

Իսկ երբ որ ինքս ինձ հարց եմ առաջարկում, թէ ինչիցն է այդ, այնպիսի պատասխան եմ ստանում, որ հաւասար է առաջւան հայեացքներին շատերի սնանկութեանը: Մեր սէրը պարզ ի պարզոց մարմնի սէր է և ոչ հոգու: Յաճախ մտքովս անցնում է, որ նորաւուրց մարդը չի կարող դրանով բաւականանալ: Նս ու Լաուրան միայն ասուածների ու անասունների նման ենք եղել և երբեք՝ մարդկանց: Ի՛սկն ասած մեր զգացմունքը մինչև անգամ չի կարելի սէր անւանել, որովհետև մէկս միւսի համար թանկագին էակներ չենք, այլ միմիայն տենչալիս Նթէ որ Լաուրան ուրիշ մարդ լինէր ու ես ուրիշ մարդ լինէի, մենք կարող էինք հարիւրապատիկ աւելի անբախտ լինել, բայց այժմ չէի զգալ, թէ Նւմէյի սանիկների դրութեանն եմ հասել: Նս հասկանում եմ, որ միմիայն ոգի լինել ցանկացող սէրը միայն սուեր կը դառնայ, բայց ոգու բոլորովին զուրկ սէրն էլ միայն լրբութիւն կը լինի: Ուրիշ հարց է, որ նրանք, որոնց դիպում է Յիրցէայի գաւազանը, կարող են հաճոյք զգալ լրբութիւնից:

Բայց տարօրինակ է և տխուր ինձ համար, որ ես, հեղինական տիպիկն պատկանողս, այդպիսի բաներ եմ գրում: Սակայն սկսում եմ սկսապտիկաբար վերաբերւել իմ Հեղադային. մէջս կասկած է ծագում, թէ արդեօք կարելի է ապրել կեանքի այնպիսի եղանակներով,

¹⁾ Յունաց դիցաբանութիւնից. Արևի և Պերսէիս չաւրժահարսի աղ. ջիկը, որ Ողիսեսի ուղեկիցներին խող դարձրեց, իսկ Ողիսեսին իրան մի ամբողջ տարի պահեց իւր մօտ:

²⁾ Ողիսեսի խողարածը:

որոնցով ապրում էին մարդիկ հին ժամանակները և որոնք անցել —
գնացել են. և քանի որ ես միշտ անկեղծ եմ եղել, գրի եմ անցնում
ինչ որ մտածում եմ:

30 ապրիլի.

Երէկ յանկարծ հօրաքրոջիցս նամակ ստացայ: Հռոմիցն են ու-
ղարկել ինձ: Երկու շաբաթ սրանից առաջ է գրւած եղել. չեմ
իմանում ինչու են այդքան երկար պահել Casa Osoria-ում: Հօրա-
քոյրս հաւատացած է, որ գնացել եմ Կորֆու, բայց կարծում է,
որ պէտք է արդէն վերադարձած լինեմ և գրում է ինձ հետևեալը.

«Շատ կարօտով ու անհանգստութեամբ տեղեկութիւն ենք սպա-
սում քեզնից: Ես պատուել եմ, իմ արմատները շատ խոր ու պինդ
են բուն դրել հողի մէջ և ամեն մի քամի չի կարող ինձ ցնցել,
բայց Անեկայի վրայ նայելիս մարդու խիղճը գալիս է: Նա ակ-
ներև քեզնից նամակի էր սպասում Վիէննայից կամ Հռոմից, և երբ
որ տեսաւ որ նամակ չի գալիս, սկսեց անհանգստանալ: Յետոյ, ինչ-
պէս ինքդ էլ գիտես, հօրդ մահը վրայ հասաւ: Ես դիտմամբ Անեկ-
կայի ներկայութեամբ բարձրաձայն ասում էի, որ այժմ դու բացի
հօրդ մահից ոչ մի ուրիշ բանի մասին չես կարող մտածել, բայց
մի քանի շաբաթից յետոյ թմրութիւնիցդ կ'ազատես ու նորից
կը դառնաս դէպի դործունեաց կեանքը: Ես ու Անեկան իրար հետ
իբր թէ բաց չենք խօսում, բայց իրար շատ լաւ հասկանում ենք:
Տեսայ, որ շատ հանգստացաւ: Սակայն երբ որ մի ամբողջ ամիս
անցկացաւ ու դու մէկ-երկու խօսք էլ է չը գրեցիր մեզ, նորից
սկսեց դարդ անել գլխաւորապէս քո առողջութեան համար, բայց
անշուշտ և նրա համար, որ այդպէս մոռացել ես մեզ: Իմ սիրտս
էլ անհանգիստ էր լինում և ես մի քանի նամակ գրեցի քեզ Կոր-
ֆու poste restante, ինչպէս որ պայմանաւորել էինք: Ոչ մի պա-
տասխան չը ստանալով՝ փորձում եմ գրել քո տան հասցէով Հռոմ,
որովհետև մտածում ենք թէ կարելի է հիւանդ ես և այդ միտքը
թունաւորում է մեր կեանքը: Գոնէ մի քանի խօսք գրիր, և որ
գլխաւորն է, աչքիս լոյս Լէօն, դէն զցիր վրայիցդ անզգացութիւնը
ու առաջւան Լէօնը դարձիր: Ես պարզ կը խօսեմ քեզ հետ: Անեկ-
կայի դարդի վրայ այն էլ է ազդել, որ նրա մօրը ով որ ասել է,

Թէ դու ամբողջ աշխարհին յայտնի ես իբրեւ Թեթևաորիկ մարդ։ Երեւակայիր Թէ որքան զայրացալ։ Յելինան յուսահատուած լսածը յայտնել է աղջկանը և այժմ մէկը զլիսացաւից սկի աչք չի բաց անում, միւսն էլ՝ խեղճը գոյնը պցել է, լղարել է ու այնպէս փոխւել է, որ մարդու սիրտ կսկծում է տեսնելիս։ Բայց այնպէս քաղցր ու հրեշտակի նման բարի արարած չի լինիլ որ Անելկան է։ Մօրը չը վշտացնելու համար իրան ուրախ է ձևացնում, բայց շատ լաւ տեսնում եմ, Թէ ինչ օրի է խեղճը ու սիրտս կտրաւում եմ։ Ամենաքաղցր որդեակս, ես էլ դրա մասին չէի խօսում քեզ հետ Հռոմում դարդիդ պատճառով, բայց այդ անբախտութիւնը Աստծու կամքիցն է, որի հետ պէտք է հաշուել ու յետ չը մնալ կեանքից։ Ձեռ կարող մի բան գրել, որ սրտներս հանգստանայ։ Խղճաւ Անելկային Գեղնից ինչ ծածկեմ, իմ սրտիս ամենամեծ բաղձանքն այն է, որ սուգդ վերջանալուց յետոյ դու ու Անելկան պսակէք իրար հետ Թէկուզ մէկ կամ երկու տարի անցնելուց յետոյ, որովհետեւ իմ կարծիքով Անելկան՝ Յենիքս¹⁾ է։ Բայց ճիշտ ասած, եթէ մինչև անգամ իմ փափագս չի կատարւելու, էլի աւելի լաւ կը լինէր, որ մի կերպ մեզ իմաց տայիր այդ։ Դու գիտես որ ես երբէք չափազանցնելու սովորութիւն չ'ունեմ և եթէ քեզ դուրս եմ այս, այն է պատճառը, որ իսկապէս վախենում եմ Անելկայի առողջութեան համար։ Բացի այդ պէտք է իմանաս, որ մէջ տեղը Անելկայի ապագայի հարցն է։ Կրօնից կին սկսել է շատ շուտ-շուտ յաճախել Յելինային ու Անելկային և ակներեւ բան է, որ որոշեալ դիտաւորութիւններ ունի։ Դու գիտես իմ բնութիւնը, ուղում էի առանց երկար ու բարակ խօսելու տանից վաճառել նրան, մանաւանդ որ կասկած եմ տանում Թէ նա պէտք է ասած լինի քո Թեթևաորիկութեան մասին, բայց Յելինան շատ աղաչեց որ չանեմ։ Նա բոլորովին յօյսը կտրել է և ամենեւին չի հաւատում Թէ դու սիրում ես Անելկային։ Ի՛նչ պէտք է անէի։ Իսկ եթէ յանկարծ

¹⁾ Հին եգիպտացիների առասպելներից, Առասպելական թույժն, որ զգալով մահաւան գալը, խարովկ էր սարքում, ինքն իրան ալրում էր ու լետով ճորից վերածնւում իւր աճիւնից։ Եգիպտացիները ալը թույժը համարում էին անմահութեան նշանաբան։

դուրս դալ, որ նրա այդ կասկածը մայրական սրտի ճշգրիտ վկայութիւնն է։ Որքան կարելի է շուտով պատասխանիր նամակիս, Լէօնս, և ընդունիր քո արեւովը միայն երդում ուտող պառաւի համբոյն ու օրհնութիւնը։ Անեկան իւր ժամանակին ուզում էր քեզ նամակ գրել, ցաւակցութիւնը յայտնել, բայց Յելինան թոյլ չը տուց, որի համար ես նրա հետ կուեցի։ Յելինան շատ լաւ կնիկ է, բայց երբեմն բարկութիւնս բերում է։ Բոլորը քեզ շատ ու շատ բարեւ են անում։ Խաւստովսկու որդին զարեջրի գործարան է հիմնում Պլոշովում։ Մի քիչ փող ինքն ունէր, մնացածն էլ ես պարտք տուեցի։

Առաջին բոպէին ինձ թւում էր, թէ այդ նամակը ինձ վրայ տպաւորութիւն չի գործում։ յետոյ սկսեցի գնալ-գալ սենեակում ու տեսայ, որ սխալւում եմ։ Տպաւորութիւնը բոպէ առ բոպէ սաստկանում էր ու վերջ ի վերջոյ անասելի սաստկութեան հասաւ։ Մի ժամ անցած ես զարմացած ինձ ու ինձ ասացի՝ լսատանայ է մտել մէջս ինչ է, ոչ մի ուրիշ բանի վրայ չեմ կարողանում մտածել։ Զարմանալի է, թէ որքան արագութեամբ ամենատարբեր զգացմունքներ էին տիրում ինձ, այնպէս սլանալով մէկ-մէկի յետեւից կարծես թէ քամին ամպերի պէս առաջը զգած քշում էր նրանց։ Սակայն ինչ աստիճան ջղալին մարդ եմ եղել ես։ Սկզբում խանդաղանք զգացի դէպի Անեկան։ Այն ամենը, ինչ որ մի քիչ առաջ զգում էի դէպի նա և որ կարծես հոգուս հեռաւոր խորշերում թաղնւել էր, յանկարծ երես արեց։ Գնալ, հանգստացնել, դուրդուրել, երջանկացնել—այդ եղաւ իմ առաջին անգիտակցական շարժումը, սրտիս առաջին ձգտումը, որ շատ հեռու էր պարզ ձեւակերպւած կամքից, բայց չափազանց զօրեղ էր։ Իսկ երբ որ երեւակայեցի նրա արտասուակալած աչքերը, նրա ձեռները իմ ձեռներիս մէջ, դէպի նա զգացած տենչանքս չարութիւն առաւ իւր բոլոր սաստկութեամբ։ Յետոյ մոքովս թռուցիկ կերպով անցաւ համեմատութիւն նրա ու Լաուրայի համար. շատ չարաբաստիկ պէտք է դուրս դարձ Առաջին բոպէին այն կեանքը, որ այստեղ վարում էի, ոսկորի նման դէմ առաւ բզումս։ Պահանջ զգացի աւելի մաքուր օդի, քան այն, որ այստեղ ծծում եմ, անդորրութեան, քաղցրութեան և շանաւանդ զգացմունքների ազնուութեան։ Միւննոյն ժամա-

նակը ինձ ուրախութիւն տիրեց, որ դեռ ոչինչ չեմ կորցրել, որ ամեն բան կարելի է ուղղել և որ այդ միմիայն իմ կամքիցն է կախած: Յանկարծ միտքս եկան Կրոմիցկին ու Անեկլայի մայրը, որ ինձ վրայ հաւատ չ'ունենալով՝ ակներևաբար նրա կողմն է անցել: Նրանց մասին որ սկսեցի մտածել՝ բարկութիւնս եկաւ, որ հետզհետէ սաստկանալով խեղդեց բոլոր միւս զգացմունքներս: Որքան բանակա- նութիւնս աւելի էր ընդունում, որ տիկին Յելինան կատարեալ իրա-ւունք ունի ինձ վրայ յոյս չը դնելու, այնքան աւելի սաստիկ էի դէպի նա ռիս զգում, որ համարձակել է այդպէս թերահաւատու- թեամբ վերաբերել ինձ: Վերջը հասա՛յ կատաղի զայրացման թէ իմ և թէ բոլորի դէմ: Ինչ որ մտածում ու զգում էի, բոլորը ամ- փոփեց այս չորս խօսքում՝ «Լաւ, թող այդպէս լինի»:

Նամակը երէկ ստացայ. այսօր աւելի հանգիստ սրտով ինքս ինձ զննելով, զարմանալով տեսնում եմ, որ այդ վիրաւորանքի քէնը այն- քան խոր է թափանցել հոգուս մէջ, որ այս բոլորիս աւելի սաստ- կացել է քան թուլացել: Այժմ այդ քէնն է իմ մէջ տիրող զգաց- մունքը: Ինքս ինձ ամում եմ ամեն բան, ինչ որ կարող է ինքն իրան ասել լուրջ մտածող մարդը, բայց էլի չեմ կարողանում այդ Կրոմիցկու համար ներել ոչ միայն մօրը այլ և Անեկլային: Անշուշտ Անեկլան մի խօսքով կարող էր նրա ոտը կտրել Պլոշվից, իսկ եթէ նա այդ չի անում, այդ նրա կողմից զիջումն է մօրը կամ թէ ու- րիշ խօսքով նա ինձ զոհում է իւր մօր միգրենին (գլխացաւ): Բացի այդ Կրոմիցկին վայր է գցում Անեկլային իմ աչքումս, պղծում է նրան, ստորացնում, հասցնում է նրան հարսնացու օրիորդի չիմար տիպին: Չեմ կարողանում հանգիստ սրտով խօսել դրա մասին:

Կարելի է ես այդպէս եմ մտածում ու զգում, որովհետեւ սաս- տիկ գրգռած եմ. գուցէ իմ ինքնասիրութիւնս չափից դուրս զար- գացած է. ես ինձ գիտակցում, տեսնում եմ, կարողանում եմ նա- յել ինձ վրայ իբրեւ մի կողմնակի մարդ, բայց այդ երկուութիւնս ամենեւին չի օգնում ինձ: Գնալով աւելի ու աւել եմ տաքանում ու գրգռում: Դրա մասին գրելը անգամ տանջում է ջղերս, ուստի վերջ եմ տալիս:

1 մալխի.

Գիշերը մտածում էի՝ զուցէ վաղը աւելի հանգիստ լինի սիրտս: Ի՞նչ հանգիստ: Գնալով միմիայն ատելութիւն է ծագում իմ մէջ Անեկայի մօր, Անեկայի, հօրաքրոջս ու իմ դէմ: Ամեն մարդու հետ վարւելիս պէտք է յարմարւել նրա ջղերին, իսկ նրանք մոռացել են, որ իմ ջղերս չափազանց նուրբ են: Բայց միթէ ինձ համար լաւ չէ այստեղ՝ Պելիում: Լաուրան հէնց իմանաս միսպազաղ մարմար է: Նրա մօտ եղած ժամանակս գոնէ չեմ տանջւում, որովհետեւ բացի զեղեցկութիւնից նրա մէջ ոչինչ չկայ: Իսկ այդ՝ չափից վեր նուրբ, զգայուն հոգիները ինձ սաստիկ ձանձրացրել են: Թող Կրոմիցկին նրանց մխիթարի:

2 մալխի.

Ես ինքս այսօր նամակը տարայ պոստը: Նամակիս բովանդակութիւնն այս էր, — ցանկանում եմ պան Կրոմիցկուն բախտաւորութիւն պաննա Անեկայի հետ ու պաննա Անեկային՝ պան Կրոմիցկու հետ: Վճռական պատասխան էր ուղղում հօրաքրոջս, թող զնայ կարգայ:

3 մալխի.

Մտքովս անցնում է, մի զուցէ հօրաքրոջս կողմից նամակումը Կրոմիցկու անունը տալը կանացի դիւանագիտութիւն լինի, մի զուցէ այդ՝ խթանի դեր պէտք է կատարէր իմ վերաբերմամբ: Եթէ այդպէս է, շնորհաւորում եմ հօրաքրոջս նրա մարդ ճանաչելու և ճարպկութեան համար:

10 մալխի.

Անցել է մի շաբաթ: Ոչինչ չէի գրում, որովհետեւ շշմածի պէս էի: Խիղճս սաստիկ տանջում է ինձ ու սիրտս այրւում է կսկիւծից: Անեկային ես երբէք անտարբեր չեմ վերաբերւել և չեմ վերաբերւում: Միտքս են գալիս Համլէտի խօսքերը՝ «քառասուն հազար եղբայր այնպէս չէին կարող սիրել Օֆելիային ինչպէս ես էի սիրում նրան»: Միայն թէ այդ բացականչութիւնը ես կը փոխէի այսպէս՝ «Անեկային քառասուն հազար Լաուրայից աւելի էի սի-

րումն: Թարսի նման հէնց իմ ձեռքից պէտք է չարիք հասնէր նրան: Երբեք միութարութեան նշոյլ է փայլում ինձ, թէ չարիքը հէնց այն կը լինէր նրա համար, եթէ որ ինձ պէս մարդու հետ պսակէր, բայց այդ ճիշտ չէ: Եթէ որ նա իմն լինէր, ես նրա համար լաւ մարդ կը լինէի: Բայց ինձ թունաւորում է այն կասկածը, թէ գուցէ նա Կրտսեկոյն էլ կը բաւականանայ:

Երբ որ մտքովս անցնում է այդ, սիրոս տակն ու վրայ է լինում և քիչ է մնում մի ուրիշ այնպէս նամակ էլ գրեմ:

Եղաւ պրծաւ,—այդ ինձ պէս մարդկանց համար միակ միութարութիւնն է, որովհետեւ կարող են ձեռները խաչել ու առաջաց պէս անշարժ մնալ: Գուցէ այդ չափազանց թուլութեան ապացոյց է, բայց այդ երկու խօսքը ինձ մի քիչ սփոփում են:

Այժմ կարող եմ աւելի հանգիստ միտք անել:

Գլխիս տալիս եմ ու հարցնում ինքս ինձ, ինչպէս է պատահել, որ մի մարդ, որը ոչ միայն պարծենում է թէ վերին աստիճանի զարգացած ինքնաճանաչութիւն ունի, այլ և իսկապէս ունի,—մի քանի օր է ինչ միմիայն անգիտակցաբար, ընթերցելու կերպով է վարում: Ել ինչին է պէտք ինքնագիտակցութիւնս, եթէ որ ջղերի մի քիչ սաստիկ գրգռելուց զնում թաղում է ուղեղի խորշերում և կրաւորական վկայ է դառնում ընթերցելու գործողութիւնների: Ինքս ինձ քննելու *post factum* (մի բան անելուց յետոյ): Ձեռ իմանում դրանից ինչ դուրս կը գայ, բայց քանի որ ուրիշ ոչ մի բան չի մնում ինձ անելու, կ'աշխատեմ զոնէ այդ օգուտը քաղել ինքնագիտակցութիւնիցս: Այդպէս ուրեմն ինչու ես վարեցի այնպէս ինչպէս վարեցի: Կարելի է այն պատճառով, որ ես իսկապէս զարգացած, գուցէ մինչև անգամ շատ զարգացած մարդ եմ (լեզուս չորանայ, եթէ որ ուզում եմ ինքս ինձ շողողորթել կամ գովել),—բայց խելացի մարդ չեմ: Մանաւանդ գուրկ եմ տղամարդու հանգիստ խելքից: Ջղերիս սանձը չեմ կարողանում քաշել, չափից աւելի զգայուն եմ, ինձ, բանաստեղծի ասելով, կարող է վիրաւորել մինչև անգամ վարդի երկու տակ ծալած թերթիկը: Իմ խելքիս մէջ ինչ որ կանացի բան կայ: Կարելի է ես այդ կողմից սկի բացառութիւն չեմ, գուցէ վարտիկ հագնողների մեծ մասը, մանաւանդ մեզնում, հէնց այդ տիպին է պատկանում: Այդ ինձ համար մեծ

մխիթարութիւն չէ: Այդ տեսակ խելքը կարող է շատ բան հասկանալ, բայց դժուար է մարդուս համար նրանով կառավարել կեանքում. այդպիսի խելքը անհանգիստ կերպով դէս դէն է ընկնում, տատանւում է, ամենանուրբ քամիով քամում է իւր ամեն մի դիտաւորութիւնը և վերջ ի վերջոյ մոլորւում մնում է իրար խճճած ճանապարհների մէջ: Դրանից նւագում է գործելու ընդունակութիւնը և զարգանում է բնաւորութեան թուլութիւնը, որ մեզնում բնածին ու ընդհանուր պահասութիւն է: Սրինակի համար մի նոր հարց եմ տալիս ինքս ինձ, — եթէ որ հօրաքրոջս նամակում Կրօմիցիու անունը ամենեկին չիշւած չը լինէր, գործը արդեօք ուրիշ վերջ կ'ունենար: Եւ, Աստուծ վկայ, չեմ համարձակւում աչոյս պատասխանել: Այդքան շուտ չէր լինել, ճիշտ է, բայց ով գիտի, աւելի բարեյաջող կը լինէր արդեօք: Թոյլ բնաւորութիւններին պէտք են հազար ու մի հեշտութիւններ, միմիայն զօրեղ հոգիներն են դիմադրութիւնից նոր եռանդ ստանում: Լաուրան, որ մի քանի բաներում մոռնկի պէս թափանցող է, երեւի այդ հասկացել է և զուցէ դրանից է, որ շատ քաղցր էր վարւում ինձ հետ:

Վերջապէս ինչ է երեւում դրանից: Որ ես փալմս մարդ եմ: Ամենեկին: Մի մարդ որ իրան մասին միշտ ճիշտն է ասում առանց խնայելու, այժմ էլ չէր խնայիլ, այդ էլ կ'ասէր, բայց չէ, ամենեկին... Զգում եմ, որ առանց երկար ու բարակ մտածելու կարող էի ուղեւորել հիւսիսային բևեռը կամ միսսիօնէր դառնալ ու զնալ Աֆրիկայի խորքերը. մի քիչ անձնանպաստանութիւն, մի քիչ ժառանգական արիասրտութիւն կայ մէջս և ես ընդունակ եմ ամենաջանդուգն դիտաւորութիւններ իրազօրծել, ամենավտանգաւոր ձեռնարկութիւններ սկսել: Տեմպերամենտս վառվռուն է, շարժունութիւնս այնքան չէ, ինչքան օրինակ Մեհաոփնակունը, բայց էլի սովորականից աւելի է:

Բայց երբ որ պէտք է լինում մի կենսական խնդիր վճռել, սկեսրոիկականութիւնս ինձ ուժից զցում է, միտքս մոլորւում է հազար ու մի նկատումների, եզրակացութիւնների մէջ, կամքս յենարան չի գտնում իւր համար և իմ գործողութիւններս մասամբ կախած են լինում արտաքին գէպերից:

Լատուրային հրեք սիրելի չեմ եղել, թէև թոված եմ եղել ու մինչև այժմ էլ թոված եմ նրա ֆիզիկական հրապույրներին: Գուցէ այդ՝ առաջին անգամից տարօրինակ բան թւի, բայց իսկապէս բաւական սովորական երևոյթ է: Կարելի է մինչև անգամ սիրահարած լինել և չը սիրել: Քանի քանի անգամ դէպք եմ ունեցել տեսնելու դառն, կծու, փոխադարձ վիրաւորանքներով լի սիրահարութիւն, որովհետև նա հիմնւած չի եղել սիրոյ վրայ: Կարծեմ արդէն ասել եմ որ Մեստօինսկիները ոչ միայն սիրահարւած են իրար վրայ այլ և սաստիկ սիրում են միմիանց. դրանից է, որ նրանք իրանք իրանց շատ լաւ են զգում... Ա՛խ, զգում եմ, որ էլ կը սիրէի Մեսկային ու մենք էլ նրանց նման լաւ կ'ապրէինք... լաւ է սկի չը խօսեմ դրա մասին... Գալով Լատուրային, շատերը սիրահարւած կը լինեն նրա սև մազերի, նրա արձանային մարմնաձևերի, նրա յօնքերի, ձայնի, հայեացքի, գլուխը պահելու եղանակի վրայ և այլն, սակայն հաւատացած եմ, որ երբէք նրան ոչ մի սիրող չի եղել: Այդ տարօրինակ կինը գրաւում է դէպի ինքը գրեթէ անդիմադրելի կերպով, բայց միևնոյն ժամանակը և յետ է մղում: Արդէն ասել եմ, որ բացի գեղեցկութիւնից նրա մէջ ոչինչ չկայ, որովհետև նրա արտասովոր խելքն էլ միմիայն առաջին նաժիշտի դերն է կատարում, որ չօքած նրա գեղեցկութեան առաջ կապում է նրա կօտորները ¹⁾: Սրանից մի շարաթ առաջ Լատուրային տեսաջ նորերումս խեղդած ձկնորսի երեխային ողորմութիւն տալիս ու ինքս ինձ մտածեցի,—եթէ իմանար, թէ իրան աւելի սաղ կը գար այդ երեխայի աչքերը հանելը, հանգիստ ու ուրախ սրտով կը հանէր նրա աչքերը: Մարդ զգում է այդ բաները և ահա ինչու կարելի է գծել այդ կնոջ վրայ, բայց անհնար է նրան սիրել: Իսկ նա ամեն բան հասկանում է բացի դրանից:

Բայց ի՞նչքան գեղեցիկ է: Երբ որ մի քանի օր սրանից առաջ նա ամառանոցի սանդուղներով պարտեզ էր իջնում շորոր գալով իւր հրաշալի ազդրների վրայ—էինձ թւում էր, որ վայր կ'ընկնեմ,

¹⁾ Բարձր ոտնամաններ, որ հագնում էին չոյն դերասանները:

ինչպէս ասում է Սլովացկին: Միանգամայն երկու ոչոքի ազդեցութեան տակ եմ, որոնցից մէկը ձգում է դէպի ինքը, միւսը յետ է մղում: Ուզում եմ գնալ Զւիցերիա և միևնոյն ժամանակը ուզում եմ վերադառնալ Հոռմ: Ինչով է վերջանալու, չը գիտեմ: Ռիբոն ճիշդ է ասում, թէ «ուզում եմ»-ը միայն զխտակցութեան դրութիւն է և ոչ կամքի գործողութիւն (ակտ), ևս պակաս կամքի գործողութիւն է կրկնակի «ուզում եմ»-ը: Նոտարիցս նամակ ստացայ, որով ինձ կանչում է Հոռմ ժառանգութեանս գործերի համար. ինչ-որ ձևականութիւններ կան անելու, որոնք ասե՛նք առանց ինձ էլ կարելի կը լինէր գլուխ բերել, եթէ որ անպատճառ ուզէի չերթալ... Բայց այնու ամենայնիւ այդ պատրուակ է... Մի քանի ժամանակ է Նաուրային աւելի չեմ սիրում քան առաջ: Նա ինքը այդ բանին ամենեւին չի նպաստել, որովհետեւ նա միշտ միատեսակ է, իսկ այդ նրանից է այդպէս եղել, որ տգիտութիւնս իմ վրայից նրա վրայ եմ անցկացրել: Հոգեկան կռիւներիս ժամանակ նրա մօտ ոչ միայն, հանգիստ էի փնտռում, այլ և միևնոյն ժամանակը՝ կամովին ստորացումն. այժմ դրա համար ոխ եմ զգում դէպի նա: Այդ իմ ներքին փոթորիկների մասին նա մինչև անգամ սկի չը գիտէր էլ: Նրան ինչ կարող էին հետաքրքրել այդ փոթորիկները, քանի որ չէին կարող նրան պէտք զալ զարդարանքի համար: Միայն այն է նկատել, որ մի տեսակ տենդային դրութեան մէջ եմ ու սովորականից աւելի կարկացկոտ. մի թեթեւ հարցրեց թէ ինչ է պատճառը, բայց շատ էլ չ'աշխատեց որոշ պատասխան ստանալ:

Գուցէ դէպի նա զգացած տենդանքս չաղթի ու չը գնամ, բայց ճամենայն դէպս վաղը կամ հէնց այսօր կ'ասեմ նրան որ գնալու եմ: Ինձ հետաքրքրում է, թէ ինչպէս կ'ընդունի նա այդ տեղեկութիւնը, մանաւանդ նրա համար եմ շատ հետաքրքրուում, որ լաւ չեմ կարողանում երևակայել այդ: Կասկած եմ տանում, որ նա էլ չը նայեցով որ սաստիկ տաքացած է ինձ վրայ (այնպէս ինչպէս ես եմ տաքացած նրա վրայ), ինձ չի սիրում, — ի հարկէ եթէ նեղութիւն կրում է սիրելու կամ չը սիրելու ում և իցէ: Մեր հոգիները շատ բանում իրար նման են, ասկայն հազար ու մի ներհակ յատկութիւններ էլ ունեն:

Սարսափելի տանջւած եմ: Զեմ կարողանում չը մտածել այն

տպաւորութեան վրայ, որ նամակս գործած կը լինի Պլոշովում: Շարունակ մտածում եմ դրա վրայ, մինչև անդամ և այն ժամանակ, երբ որ Լաուրայի հետ եմ լինում. շարունակ աչքիս առաջին տեսնում եմ Աննլկային ու հօրաքրոջս: Ի՞նչ բախտաւոր է Լաուրան իւր մշտական հանգստութեամբ: Ես ինքս ինձ հետ դժւար եմ կարողանում ետլա գնալ...

Ինքս ինձ մխիթարում եմ մտածելով տեղափոխութեան մասին: Պեշին, չը նայելով որ այստեղ կան ծովային լողարաններ, սաստիկ դատարկւել է: Շոքից մարդ խեղդւում է: Մովը ծոյլ ընկած է առանց շարժելու ալիքները մինչև անգամ ավերի մօտ, կարծես թէ շոքից շունչ չի կարողանում քաշել: Երբեմն-երբեմն քամի է բարձրանում, բայց հեղձուցիչ քամի՝ առաջը դցած քշելով սպիտակ փոշու ամպեր, որոնք խիտ շերտով ծածկում են արմաւենիների, թղենիների ու մրտենիների տերեւները և փակւած վանդակափեղկերի (ժալիւզ) միջով թափանցում են սենեակները: Աչքերս ցաւում են, որովհետեւ բոլոր սյուներից լոյսը այնպէս վառ կերպով է արտափայլում, որ ցերեկով չի կարելի նրանց նայել:

Թէկուզ Զւիցերիա թէկուզ Հռոմ կը գնամ, միայն թէ այստեղից հեռանամ: Ինձ թւում է, որ ինձ համար ամեն տեղ աւելի լաւ կը լինի քան այստեղ: Ասեմք բոլորս էլ պատրաստուում ենք ճանապարհ ընկնելու: Դեիսին չորս-հինգ օր կը լինի արդէն որ չեմ տեսել: Ինձ թւում է, որ այսօր-էգուց կը խեղադարձի: Բժիշկն ասում էր, որ խեղճը նրան շարունակ խնդրում է որ կոխ պրծնեն իրար հետ: Այդ ասում են շատ վատ նշան է:

Հռոմ. Casa Osoria, 18 մայիսի.

Ահներեւ է որ միայնութեան պէտք ունեի: Սիրտս այնպէս է, ինչպէս որ էր Պելի հասնելուց անմիջապէս յետոյ—միւսնոյն ժամանակը համ տխուր է համ լաւ: Մինչև անգամ այժմ սիրտս աւելի լաւ է քան Պելիում, որովհետեւ չեմ զգում այն անհանգստութիւնը, որ հէնց առաջին օրից ազդում էր ինձ Լաուրայի ընկերութիւնը: Ման եմ գալիս խուլ, մութը տան մէջ, անթիւ բաներ եմ գտնում, որոնք միտքս են բերում հօրս և նրա յիշատակը նորոգւում է սրբտումս: Նա էլ արդէն մի քիչ կապուտակացել էր ինձ համար, իսկ

այժմ ամեն մի քայլափոխում հանդիպում եմ նրա վաղեմի, իրական կեանքին: Նրա առանձնատեսակի սեղանի վրայ ընկած են խոշորացնող ապակին, որով նայում էր զանազան առարկաների, բրոնզե ասեղներ, որոնցով փորածոյ անօթներից հանում էր չորացած հողը, ներկեր, վրձիններ, սկսած ձեռագիրների, հաւաքածուներին վերաբերող նկատողութիւնների, մի խօսքով՝ հազար ու մի մանր-մուր բաներ: Երբեմն-երբեմն ինձ թւում է, թէ նա ուրիշ տեղ է գնացել միայն և կը վերադառնայ ու նորից կ'սկսի պարապել իւր ամենօրեայ գործերով, իսկ երբ որ այդ պատրանքս փարատւում է ճշմարիտ ու խորին վիշտ եւ զգում և սիրում եմ նրան ոչ միայն իբրեւ չիղողութիւն, այլ և իբրեւ՝ այժմ Campo Santo-ում յաւիտենական քնով ննջող էակի:

Դրանից է յառաջանում տխրութիւնս, բայց այդ զգացմունքը այնքան մաքուր է այն բոլոր զգացմունքներից, որոնք վերջին ժամանակները ինչ ուզում էին անում էին հետո, որ ես զոհ եմ այժման դրութիւնիցս, որովհետեւ ինքս ինձ աւելի լաւ եմ զգում կամ գոնէ այնքան փչացած չեմ զգում, որքան ինձ թւում էր... Նկատել եմ նոյնպէս որ ոչ մի՝ թէկուզ ամենաթուր դատողութիւնն անգամ չի գրկում մարդուն այն զւարճութիւնից, որ նրան պատճառում է իւր մէջ որ և իցէ ազնիւ սաղմեր տեսնելը: Որտեղից է մարդկանց այդ անգիմադրելի ու անզսպելի ձգտումը դէպի բարին: Երբեմն սկսելով յետ տալ այդ կծիկի թելը շատ հեռու եմ գնում: Քանի որ մեր բանականութիւնը ընդհանուր գոյութեան տրամաբանական անդրադարձումն է, գուցէ մեր՝ բարիի մասին ունեցած գաղափարն էլ նմանապէս մի որ և իցէ բացարձակ (աբսօլյուտ) բարիի արտացոլումն է: Իսկ եթէ այդ ճիշտ լինի մարդ կարող է միանգամից վերջ տալ իւր կասկածներին ու բացականչել ոչ միայն «eureka» (գտայ), այլ և «ալէլուիա» (օրհնելից Աստծուն): Վախենում եմ սակայն, որ այդ շէնքս էլ ուրիշ շատերի նման կործանւի, ուստի սիրտ չեմ անում կառուցանել: Այդ ասեւք աւելի զգում եմ, քան դատողութեամբ ըմբռնում, բայց անշուշտ մի ժամանակ նորից կը դառնամ այդ խնդրին, որովհետեւ հարցը ոչ թէ ոտիցս, այլ հոգուցս փուշ հանելու մասին է: Իսկ այժմ չափազանց չարչարած եմ, սիրտս չափազանց տխուր է և միևնոյն ժամանակը չափազանց հանդիստ ու լաւ:

Թւում է ինձ, թէ աշխարհիս երեսին մարդս միակ արարածն է, որ կարողանում է չաճախ իւր կամքին հակառակ վարւել: Դուրս է գալիս որ վաղուց էր սիրտս ուզում Պելլիից հեռանալ, բայց օր օրի ետեւից անցնում էր, իսկ ես մնում էի նստած այնտեղ: Ճանապարհ ընկնելուս նախընթաց օրն էլ դեռ համարեա հաւատացած էի, որ կը մնամ: անակնկալ կերպով ինքը Լաուրան ինձ օգնութեան հասաւ:

Նրան յայտնեցի նստարից նամակ ստանալս ու գնալու վճիռս միմիայն նրա համար, որ տեսնէի թէ ինչ տպաւորութիւն կը գործի այդ նրա վրայ: Մենք մենակ էինք: Ես սպասում էի նրա կողմից մի որ և է բացականչութիւն, վրդովմունք, «Veto» (արգելում), բայց ակնկալութիւնս զուր դուրս եկաւ:

Լսելով այդ համբաւը, նա շուռ եկաւ դէպի ինձ, մտտնեւրը երեսաց իրանց մաղերիս մէջ ու երեսս երեսին մօտեցնելով հարցրեց. — բայց կը վերադառնամ, չէ:

Խաչը, մինչև այժմ էլ ինձ համար հանելուկ է մնացել, թէ այդ ինչ էր նշանակում: Արդեօք ենթադրում էր որ ինձ անպատճառ հարկաւոր է գնալ, թէ վստահ լինելով իւր գեղեցկութեան ոյժի վրայ, ամենեւին չէր կասկածում, որ կը վերադառնամ, թէ վերջապէս շտապում էր օգտուել ինձ գլխիցը ռադանելու առիթից, — որովհետեւ այդ տեսակ հարցմունքից յետոյ ինձ ոչինչ չէր մնում անելու քան ճանապարհ ընկնել: Հարցնելիս արած փաղաքշական շարժումը մի քիչ հակասում է այդ ենթադրութեանը, որ այնուամենայնիւ ինձ ամենահաւանականն է թւում: Երբեմն ես համարեա հաւատացած եմ լինում, որ նա ուզում էր ինձ ասել՝ «Դու չես ինձ պաշտօնաթող անում, այլ ես՝ քեզ: Մինչև անգամ խոստովանւում եմ, որ եթէ այդ՝ պաշտօնաթողութիւն էր, Լաուրայի ճարպկութիւնը իսկ որ չը տեսնած բան է և սաստիկ զարմանալի, մանաւանդ նրանով որ հրաժարեցնելու եղանակը շատ քաղցր ու փաղաքշական էր այնպէս որ ինձ տարակուսանքի մէջ թողեց, թէ արդեօք ձեռ առաւ ինձ թէ ոչ: Բայց ինքս ինձ խաբելու ինչ պէտք ունեմ: Նա իւր հարցով խաղը տարաւ: Դուցէ, ուրիշ ժամանակ իմ ինքնասիրութիւնս դրանից վիրաւորէր, բայց այժմ այդ ինձ համար նշանակութիւն չունի:

Սակայն այն երեկոն ոչ միայն մեր մէջ սաւնութիւն չ'ընկաւ, այլ ընդհակառակը սովորականից աւելի քնքոյշ էինք վերաբերուում իրար: Շատ ուշ բաժանւեցինք իրարից: Մինչև այժմ էլ աչքիս առաջին տեսնում եմ, ինչպէս նա ձեռքով ծրագի առաջը բռնած ու աչքերը կախ զցած ճանապարհ է դնում ինձ մինչև դուռը: Այնքան զեղեցիկ էր նա, որ ափսոսում էի, որ գնալու եմ: Միւս օրը նա մնաս բարեւ արեց ինձ հետ երկաթուղու կայարանում: Թէյվարդերի փունջը մինչև Զենովա սլահել էի: Զարմանալի կին է: Քանի հեռանում էի նրանից՝ Ֆիզիկական կարօսս սաստկանում էր, բայց և աւելի ու աւելի թեթեւութիւն էի զգում: Մի հանքի եկաց մինչև Հռոմ և այժմ ինձ՝ վանդակից դուրս սլծած թռչունի նման եմ զգում:

22 մալխի.

Ծանօթներիցս գրեթէ ոչ դքի չը գտայ այստեղ: Շուքը ցրւել է նրանց ամբարնոցներն ու սարերը: Յերեկով փողոցներում շատ քիչ անցորդ է լինում, միմիայն օտարազգիներ են պատահում, մեծ մասամբ Անգլիացիք՝ սնկենու կեղեից շինած շղարշապատ սաղաւարտները գլխներին, կարմրագոյն Բեզեկէրը (ուղեցոյց) ձեռներին ու անվերջ «Very interesting»-ը (շատ հետաքրքրական է) բերաններին: Կէսօրին մեր Բարուխեօն այնքան դատարկ է լինում, որ մենաւոր անցորդների ոտնաձայնը արձագանք է բարձրացնում: Բայց երեկոյեան բոլոր փողոցներում վխտում է ամբոխը: Իրիկնապահներին միշտ մի քիչ տօթ ու ջղաջին անհանգստութիւն եմ զգում, ուստի դուրս եմ գալիս թարմ օդ ծծելու ու քաշ եմ դալիս մինչև որ հալից ընկնում եմ: այդ ինձ սաստիկ թեթեւութիւն է պատճառում: Իմ զբօսանքը սովորաբար վերջանում է Պինչիօում: Յաճախ երեք-չորս անգամ գնում-գալիս եմ այդ հոյակապ դարաւորափոյր (տերրաս): Այդ ժամանակը այնտեղ շատ սիրահարւած զոյգեր են զբօսնում: Ոմանք ման են գալիս թեթեւի տաճ, գլուխ գլխի կպցրած ու աչքերը կարծես չափից վեր երջանկութիւնից դէպի երկինք բարձրացած, ոմանք էլ նստած են լինում նստարանների վրայ, թաղւած ծառերի մօլթ սոււերում: Լապտերների զոդզոջուն լոյսը այդ խաւարի խորքից երևցնում է

երբեմն բերսալիէրի (զինւոր)՝ կիսով չափ փետուրներով ծածկած կիսադէմը, երբեմն օրիորդի բաց-գոյնով հագուստը, երբեմն էլ մի բանւորի կամ ուսանողի դէմք: Ամեն բոպէ ականջիս հասնում են շշուէջներ, երդումներ, տաղեր, կիսաձայն երգեցողութիւն: Այդ ինձ վրայ զարնանային կարնաւայի (բարեկենդան) տպաւորութիւն է դործում և տարօրինակ զւարճութիւն եմ զգում երբ որ կարողանում եմ անհետանալ նրանց բազմութեան մէջ և շնչել նրանց ուրախ ու առողջ միջնորոտում: Որքան երջանիկ են, որքան պարզ են: Այդ պարզութիւնը թափանցում է իմ մէջ և աւելի լաւ է հանգստացնում ջղերս քան խօրալը: Երեկոներին տաք ու պարզ եղանակ է անում, բայց զով քամին ամենևին չի դադարում: Լուսինը բարձրանում է Trinita dei Monti-ի յետևից ու արծաթէ մակուկի նման սահում է մարդկանց այդ մըջիւնանոցի վրայով, սպիտակագոյն ներկելով ծառերի կտտարները, տանիքներն ու աշտարակները: Դարատափի ստորոտում աղմկում ու փայլվում է քաղաքը, իսկ հեռում արծաթափայլ մշուշի մէջ գծագրւում է սուրբ Պետրոսի սև սիլուէտը՝ մի երկրորդ լուսնի պէս սպիտակին տուղ զմբէթով: Վաղւայ Հռոմը ինձ այսքան գեղեցիկ չէր թւացել: Նորանոր հրապոյցներ եմ գտնում Հռոմում: Ամեն օր ուշ եմ վերադառնում տուն, ու պառկում եմ քնելու գրեթէ երջանիկ այն մտածմունքից, թէ վաղը դարձեալ Հռոմում կը զարթնեմ: Քունս հօ... Ձը գիտեմ զուցէ յօգնածութիւնիցս է, բայց մեռելի պէս եմ քնում, այնպէս որ առաւօտներն էլ դեռ մի տեսակ թմրութիւն է մնում վրաս:

Առաւօտները անց եմ կացնում նստարիս հետ: Երբեմն ինձ համար ցուցակագրում եմ հօրս հաւաքածունները: Հայրս կտակումը այդ հաւաքածունները չի բաշխել Հռոմ քաղաքին, իսկ կտակովը եւ ընդհանուր ժառանգ եմ նշանակած, այնպէս որ այդ էլ իմ սեփականութիւնս է դարձել: Հօրս կամքը կը կատարէի ու առանց տատանելու կը բաշխէի Հռոմին այդ բոլորը, բայց վախենում եմ, որ հօրաքրոջս յորդորանքները հօրս մէջ երկմտութիւն գցած լինեն ու նա դիտմամբ նրա համար կարգադրութիւն արած չը լինի հաւաքածունների մասին, որ մի ժամանակ նրանք կարողանան տարւել հայրենիք: Որ հայրս մտածելիս է եղել հայրենիքի մասին իւր կեանքի վերջին ժամերում՝ երևում է կտակի շատ պրակներէից: Կան

նոյնպէս մեր հեռու ազգականներին վերաբերեալ մանր պրակներ, իսկ նրանցից մէկը ինձ այնքան սաստիկ յուզեց, որ չեմ կարող ասել: Ահա այդ կտակը՝ «Մարդոննայի (ՍասսօՅերատո) գլուխը կտակում եմ իմ ապագայ հարսին»:

մալխի 25.

Քանդակագործ Լուկոմսկին մի ամիս կը լինի որ սկսել է շինել հօրս հասակաշափ արձանը այն կիսանդրիի օրինակով, որ մի քանի տարի առաջ ինքը շինել էր: Յաճախ օրամէջի ժամերին գնում եմ նայելու թէ ինչպէս է առաջ գնում արձանը: Նրա գործանոցը ինձ կարծես մի ուրիշ աշխարհ է տեղափոխում: Այդ արւեստանոցը չարգալիսի նման մի բան է, վերեւից մի հատիկ ահադին պատուհանով, որ նայում է հիւսիս, և այդ պատճառով նա լուսաւորում է սառը, արեւի ճառագայթներից զուրկ լոյսով: Երբ որ այնտեղ նստած եմ լինում, ինձ թւում է թէ Հռոմումը չեմ: Պատրանքը սաստկացնում է ինքը Լուկոմսկին իւր հիւսիսային մարդու գլխով, շէկ մօրուքով ու միստիկի կապուտակ, մշուշապատ աչքերով: Նրա երկու օգնականները լեհացի են, պարտեզումը կապած երկու շների անունը Կրուկ ու Կուրտա ¹⁾ է, մի խօսքով՝ նրա տունը մի տեսակ հիւսիսային կղզի է հարաւային ծովի մէջ: Սիրում եմ այնտեղ գնալ տպաւորութեան բնութոյնութեան պատճառով. սիրում եմ նոյնպէս տեսնել Լուկոմսկուն բանելիս: Այդ ժամանակ նրա մէջ ոչ ու պարզութիւն է լինում: Հետաքրքրական է լինում նա մանաւանդ այն բողբոջներին, երբ հեռանում է շինած արձանից լաւ մտիկ տալու համար ու յետոյ յանկարծ նորից մօտենում է, սկսում բանել կարծես յարձակումի գործելով: Շատ տաշանդաւոր քանդակագործ է: Հօրս արձանը աճում է նրա ձեռքերի մէջ և ապշեցնում է կատարեալ նմանութեամբ: Այդ ոչ միայն հօրս պատկերը կը լինի, այլ և գեղարւեստի գործ:

Եթէ գեղեցիկ ձևերի վրայ սիրահարած մարդու տիպ կայ — Լուկոմսկին է: Ինձ թւում է, թէ նա մինչև անգամ մտածում է

¹⁾ Կրուկ լեհերէն կը նշանակի ագռաւ, իսկ Կուրտա՝ պոչատ շուն:

յունական քթերի, իրանների, ուսերի ու գլուխների միջոցով, մի խօսքով ոչ թէ գաղափարների, այլ ձևերի, այն էլ կլասիկական ձևերի միջոցով։ Արդէն տասնհինգ տարի է որ ապրում է Հռոմում, բայց այնպէս է յաճախում թանգարաններն ու պատկերադարանները, կարծես երէկ եկած լինի այստեղ։ Դուրս է գալիս, որ այդ տեսակ սէրը ընդունակ է բոլորովին լիացնել մարդուս կեանքը և դառնալ նրա կրօնը, սակայն գուցէ այն պայմանով, որ նա էլ դառնայ նրա քուրմը։ Լուկոմակին այնպիսի ականածութիւն է զգում դէպի լաւ կազմածք ունեցող մարդիկ ինչպէս հին բարեպաշտ մարդիկ զգում են դէպի սուրբերի պատկերները։ Նրանից մէկ օր հարցրեցի, թէ նրա կարծիքով ո՞վ է Հռոմի ամենագեղեցիկ կինը։ Առանց տատանելու պատասխանեց՝ Վալերիան Դեմիսը։ Ու իսկոյն սկսեց իւր երկու ձեռքի մեծ-մեծ մատներովը օղի մէջ նկարել նրա կերպարանքը (Ֆիգուրա) այնպիսի թեթեւ ու արտայայտիչ շարժումներով, ինչպէս սովորաբար լինում են արտիստների շարժումները։ Լուկոմակին ինքն իւր մէջ փակւած ու մեղմադձոռ մարդ է, բայց այդ բոլորին այնպէս կենդանութիւն ստացաւ, որ մինչև անգամ աչքերն էլ կորցրեցին իրանց սովորական միստիկական արտայայտութիւնը։ Այ՛ս օրինակ այս, -- կրկնում էր նա նոր-նոր դծեր քաշելով -- կամ այս... Նա ոչ միայն Հռոմի, այլ և ամբողջ աշխարհի ամենագեղեցիկ կինն է։

Մանաւանդ հիացնում է նրան Լաուրայի վիզը։ Ասում է, որ Լաուրան գլուխը բարձրացնելիս՝ վիզը կազմում է դէմքի շարունակութիւնը, ոչ աւելի նեղ քան դէմքը, որ շատ հազադէպ բան է։ Երբեմն միայն Տրանստեւերումը կարելի է տեսնել հասարակ դասին պատկանող կանայք այդպիսի վզերով, բայց այդ աստիճան կատարեալ՝ երբէք։ Յիրաւի, Լաուրայի մէջ որ և իցէ ֆիզիկական պակասութիւն գտնել ցանկացողը զուր ժամանակ կը կորցնի։ Լուկոմակին այնտեղ հասաւ, որ սկսեց պնդել, թէ այդ տեսակ կանանցը դեռ նրանց կենդանի ժամանակը պէտք է արձան կանգնեցնել Պոլումում։ Ինչ խօսք որ ես նրան չէի հակաճառում։

29 մայիսի.

Ճառանգութեան վերաբերեալ իտալական երկար ու բարակ գործավարութիւնը սկսում է ինձ տաղտկացնել։ Ինչպէս այդ մար-

դիկը, չը նայելով իրանց բնածին աշխուժութեանը, ամեն գործ զանազադ են կատարում և ինչքան շատ խօսում են։ Խօսելով զլուստարել են։ Մի քանի ամենանոր Փրանսիական վէպեր եմ բերել տեղ ու ամբողջ օրերով կարդում եմ։ Նրանց հեղինակները ինձ վրայ վարժ նկարիչների տպաւորութիւն են գործում։ Ի՞նչ արագութեամբ ու հմուտութեամբ է նշանակում նրանց մէջ իւրաքանչիւր կերպարանք, որքան ոյժ և բնութոյնութիւն կայ այդ նկարագրութեան մէջ։ Երկասիրելու տեխնիկան զրանից դէնը գնալ չի կարող։ Բայց միւս կողմից՝ նրանցում դուրս բերած մարդկանց մասին պէտք է կրկնեմ արդէն մի անգամ ասածս, թէ նրանք միայն միմեանց մարմիններն են սիրում, էլ ուրիշ ոչինչ։ Այդ ի հարկէ կարող է պատահել իբրեւ բացառութիւն, բայց որ ամբողջ Ֆրանսիայում ծալրէ ի ծալր վերցրած ոչ ոք ընդունակ չը գտնէի ուրիշ տեսակ սիրելու, թող այդ ում ասում են ասեն, ինձ չ'ասեն։ Ես Ֆրանսիան շատ լաւ եմ ճանաչում և գիտեմ որ այդ կողմից նա իւր զրականութիւնից լաւ է։ Վիպագրութեան այդ շլացուցիչ, բէպ ճշգրտութեան չեռեից ընկնելը նրան կեղծ է դարձնում։ Մարդ սիրում է անհատին, իսկ անհատը բաղկանում է բացի դէմքից, հայեացքից, արտայայտութիւնից, ձայնից ու կերպարանքից — նոյնպէս և բանականութիւնից, բնաւորութիւնից ու մտածելու եղանակից, մի խօսքով շատ ու շատ մտաւոր ու բարոյական տարրերից։ Իմ չարաբերութիւնը դէպի Լատւրան ամենալաւ ասպացոյց է, որ բացառապէս արտաքին հիացման վրայ հիմնած զգացմունքը մինչև անգամ արժանի չէ սէր անւանւելու։ Բացի այդ՝ Լատւրան բացառութիւն է։

31 մայիսի.

Երէկ Լուկոմսիու հետ միասին նախաճաշեցինք, իսկ երեկոյեան ըստ սովորութեան քաշ էի գալիս Պինչիօյում։ Երեակայութիւնս երբեմն գլխիս խաղեր է խաղում։ Երեակայում էի թէ Անելկայի հետ թեւ-թեւի տւած զբօսնում ենք։ Մենք ման էինք գալիս, խօսում էինք ինչպէս այդ կ'անեն իրար չափից վեր սիրող մարդիկ։ Սիրտս այնպէս լաւ էր, ինչպէս երբէք չէր եղել Լատւրայի հետ եղած ժամանակս, բայց և որքան միայնակ զգացի ինձ, երբ որ

երևակայութիւնս դադարեց բանելուց: Զէի ուզում տուն վերադառնալ: Գիշերը քունս չէր տանում: Սարսափելի անպտուղ կեանք է իմ կեանքը: Այդ անընդհատ ինքս իմ մէջ խորատուելիս առաջնորդում է ինձ միմիայն դէպի դատարկութիւն: Բայց զգում եմ, որ ուրիշ տեսակ կարող էր լինել: Զարմանում եմ, որ Անելկայի յիշատակը այդ աստիճան կենսունակ է իմ մէջ: Ինչո՞ւ օրինակ երբէք չեմ երևակայում թէ թեւ-թեւի տւած զբօսնում եմ Լաուրայի հետ, իսկ այժմ էլ, յիշելով նրա անունը, մոքումս աւելացնում եմ՝ գլուխը քարը: Շատ անգամ մոքովս անցնում է, թէ երջանկութեան երկու թեւիցը բռնած էի ու թողեցի որ ձեռիցս դուրս թռչի:

2 լուսիսի.

Վաղուց ինձ ոչ ոք այնքան զարմանք չէր պատճառել որքան այսօր Լուկոմսկին: Միասին գնացինք Կապիտոլիումի թանգարանը: Նա ինձ զարմացրեց դեռ անտեղի Վենեթայի արձանը նայելիս, երբ չորս կողմը պտտացնելով նրա շարժական պատւանդանը՝ ասաց ինձ, թէ ինքը նէպոլում՝ զսնւած Պաքստիտի Պսիխէան աւելի բարձր է դասում, որովհետեւ նա աւելի ոգեշնչւած է: Այդ՝ այդպիսի պլաստիկ կողմից տարօրինակ կարծիք էր: Բայց աւելի անակնկալ բանի վկայ պէտք է լինէի մեռնող գլադիատորի (սուսերամարտ) կամ, ինչպէս նոյնպէս ասում են, Գալլի արձանի առաջ: Լուկոմսկին կէս ժամի չափ լուռ նայում էր նրա վրայ, իսկ յետոյ բացականչեց իրար սղմած ատամների արանքից, ինչպէս սովորութիւն ունի խօսելու յուզւած ժամանակը.— Հարիւր անգամ ասւած կը լինի, թէ այդ գլադիատորը սլաւոնական դէմք ունի,— և իրաւ, շատ զարմանալի է... Իմ եղբայրը վարձով է վերցրել Կողուէկ կալածը՝ Սերպցայի մօտ: Այնտեղ մի ձիապան կար Միխնա անունով... Անցեալ տարի ձիերը լողացնելիս խեղդւեց... նրա ու սրա դէմքը կարծես մի խնձոր լինի երկու կէս արած: Ես այստեղ շատ անգամ ժամերով կանգնում եմ, որովհետեւ այդ ինձ հարկաւոր է... Զէի ուզում ականջներիս հաւատալ և զարմանում էի, որ Կապիտոլիումի առաստաղը չի փլչում գլխներիս Սերպց, Կողուէկ, Միխնա, այստեղ—այս՝ անտիկների ու կլասիկական ձևերի աշխարհում— և այն էլ մեծ Լուկոմսկու բերնում: Իսկոյն քանդա-

կազորժի արտաքին կերպարանքի տակից եւ նշմարեցի մարդկային հոգին, — Այդ էր ուրեմն, բարեկամ, քո պլաստիկ եղածդ, մտածեցի եւ ինձ ու ինձ, այդպիսի յոյն եւ եղել հան, այդպիսի հռոմայեցի ուրեմն դու գալիս եւ Գլադիատորին նայելու ոչ միայն նրա ձևերի համար, այլ և նրա համար, որ նա միտդ է բերում Կողմալէկցի Միխնային: Այժմ հասկանում եմ թէ ինչ է նշանակում քո սակաւախօսութիւնն ու մեղամաղձութիւնը:

Լուկոմսկին անշուշտ հասկացաւ իմ մոքովս անցածը, որովհետեւ միատիկարան աչքերը չառեց գետնին ու սկսեց ընդհատող ձայնով խօսել՝ կարծես բացատրելով առաջւան ասածը:

— Մարդ չը մեռնի ու Հռոմում ապրի: Գործերս շատ լաւ են գնում... Գանգատուելու իրաւունք չունեմ... Այստեղ մնում եմ, որովհետեւ պէտք է... Բայց հայրենիքի կարօտս ինձ այնպէս է տանջում, կարծես դժոխքում լինեմ... Երբ որ շներս գիշերը պարտեզումս սկսում են հաջել, ուզում եմ պտտերը չանդռել, որովհետեւ ինձ թւում է թէ մեր գիւղումն եմ... Ես կը գժւէի, եթէ տարին գոնէ մի անգամ չ'երթայի հայրենիք: Այժմ էլ շուտով գնալու եմ, որովհետեւ արդէն այստեղս է հասել...

Այդ ասելով նա սկսեց մասով խփել կոկորդին ու շրթունքները հաւաքեց, այնպէս ինչպէս մարդ անում է սուլելիս, որովհետեւ շրթունքները դողում էին: Այդ համարեա պայթիւնի նման մի բան էր և ինձ ևս առաւել զարմանալի թւաց այդ մարդու կողմից այն պատճառով, որ բոլորովին անակնկալ կերպով եղաւ: Յանկարծ իմ սրտիս էլ յուզմունք տիրեց, որովհետեւ աչքիս առաջ պարզւեց այն ահագին տարբերութիւնը, որ կայ իմ ու այնպիսի մարդկանց մէջ ինչպէս են Լուկոմսկին ու Մեհատինսկին: Այս բոլորիս էլ դեռ կարծես մի տեսակ ահով եմ մտածում այդ տարբերութեան մասին: Ամբողջ հորիզոններ կան՝ նրանց համար տեսանելի ու ինձ՝ անմատչելի: Զգացմունքի ինչ ահագին քանակ են կրում իրանց սրտում այդ մարդիկը: Նրանք դրա շնորհիւ կարող են բախտաւոր կամ անբախտ լինել, բայց ինչ էլ լինի՝ նրանք ինձնից հարուստ են. նրանց չի սպառնում ոչ դատարկութիւն, ոչ ունայնութիւն: Նրանցից իւրաքանչիւրը տասը մարդու համար կենսական պաշար ունի: Ես էլ ինձ կարծես մի տեսակ կապած եմ զգում մեր ժո-

ղովրդի հետ, բայց այդ զգացմունքը այնքան անմիջական չէ որքան նրանցը, նա ինձնում չի վառում ճրագի բոցի նման, նա իմ էութեան մասը չի դարձել: Ինձ ապրելու համար պէտք չէ ոչ մի Կողմակի, ոչ մի Միխնա, ոչ էլ Պոշոյը. ուրիշ խօսքով ասած, այնտեղ, ուր Լուկոմակու համար կենսարար աղբիւրներ են բղխում, որոնք նրանց կեանքի իմաստ են մատակարարում, այնտեղ չոր աւազ եմ տեսնում: Մինչդեռ եթէ նրանք այդ յենարաններն էլ չ'ունենային, էլի կը ֆնային նրանց համար՝ մէկին—նրա քանդակագործութիւնը, միւսին՝ նրա գրականութիւնը: Գրեթէ անհաւատալի բան է, որ ինձ չափ երջանկութեան համար անհրաժեշտ պայմաններ ունեցող մարդը ոչ միայն բախտաւոր չը լինի, այլ և մինչև անգամ չ'իմանայ թէ ինչու է ապրում աշխարհիս երեսին: Անկասկած այդ այն պայմանների մեղքն է, որոնց մէջ ես դաստիարակւել եմ. Հռոմէերի, Մեցերի, Պարիզների ու դարձեալ Հռոմների մեղքն է. ես մի քիչ նման եմ եղել բուն հողից արմատախիլ արած, բայց օտար հողի մէջ էլ լաւ չը տնկած ծառի. սակայն մասամբ էլ իմ մեղքս է այդ, որովհետեւ ես հարցական նշաններ էի դնում ու փիլիսոփայութիւն անում այնտեղ, ուր ուրիշները միայն սիրում են: Դրա հետեանքն այն եղաւ, որ փիլիսոփայութիւնիցս ոչինչ ղուրս չ'եկաւ, իսկ սիրտս անբերրիացրի, չորացրի:

(Կը շարունակւի)